

**Հաստատված է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
Վարչության 24.01.2025թ. որոշմամբ**

**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԿՈՂՄԻՑ
ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

ԳԼՈՒԽ 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնական Պայմաններում օգտագործվող հասկացություններն ունեն ստորև ներկայացված իմաստը, եթե այլ բան նշված չէ Պայմաններում կամ չի բխում բովանդակության կամ համատեքստի իմաստից՝

Բանկ՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 09.10.2001թ թիվ 260Ա որոշմամբ, բանկային գործունեության լիցենզիա թիվ 81), այդ թվում՝ Բանկի մասնաճյուղերը:

Հաճախորդ՝ Բանկի ծառայություններից օգտվող կամ օգտվել ցանկացող ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իր նկատմամբ կիրառվող իրավունքի համաձայն կարող է ունենալ բանկային հաշիվներ և օգտվել այլ բանկային ծառայություններից:

Կողմեր՝ Բանկը և Հաճախորդը միասին:

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն:

ՀՀ ԿԲ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

Կայք՝ Բանկի պաշտոնական կայքը՝ www.unibank.am:

Բանկային գաղտնիք՝ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ բանկային գաղտնիք համարվող տեղեկատվությունը:

Անձնական տվյալներ՝ Հաճախորդին և/կամ վերջինիս փոխկապակցված անձին (կիրառելիության դեպքում) վերաբերող տվյալների, տեղեկությունների, փաստերի, հանգամանքների մասին ցանկացած տեղեկատվություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ անձին նույնականացնել, որոնց թվին կարող են դասվել անձանց նույնականացնող այնպիսի տվյալներ, ինչպիսիք են՝ անուն, ազգանուն, ծննդավայր, ծննդյան ամսաթիվ, ազգություն, քաղաքացիություն, բնակության/գտնվելու վայրի հասցեներ, կոնտակտային տվյալներ, անձնական և ամուսնական կարգավիճակ, ռեզիդենտություն, ինչպես նաև Հաճախորդին և վերջինիս կատարված գործառնությունը նույնականացնող այլ տվյալներ, որոնք օրենսդրության համաձայն կարող են համարվել անձնական տվյալներ:

Ծառայություններ՝ Բանկի կողմից առաջարկվող բանկային ծառայություններ, այդ թվում՝ Փաթեթներ (որոնք հնարավորություն են տալիս օգտվել Բանկի մեկից ավելի ծառայությունից), ինչպես նաև Համակարգի միջոցով առաջարկվող ծառայություններ, որոնց պայմանները սահմանվում են Ծառայությունների պայմաններով:

Ծառայությունների պայմաններ՝ Պայմաններում, Դիմում-պայմանագրում կամ Հայտում, և/կամ Տեղեկատվական ամփոփագրում նկարագրված, Բանկի կողմից ֆիզիկական անձանց, այդ թվում՝ Համակարգերով, առաջարկվող, ծառայությունների նկարագրությունը, հիմնական պայմանները և դրույթները, Կողմերի իրավունքների, պարտականությունների, պարտավորությունների շրջանակը, ինչպես նաև ՀՀ օրենսդրության համաձայն հրապարակման ենթակա այլ պայմաններ, որոնք կիրառվում են Բանկի և Հաճախորդի միջև իրավահարաբերություններում՝ Բանկի կողմից առաջարկվող Ծառայությունների մատուցման ընթացքում:

Պայմաններ՝ Բանկի կողմից Հաճախորդին առաջարկվող բանկային ծառայությունների, այդ թվում՝ առցանց/հեռահար, մատուցման սույն հիմնական պայմանները և դրույթները, որոնք սահմանում են Բանկի կողմից Հաճախորդին առաջարկվող բանկային ծառայությունների մատուցման հետ կապված փոխհարաբերությունների և իրականացվող գործառնությունների հիմնական պայմանները և դրույթները, Բանկի և Հաճախորդի միջև ձևավորված, առկա փոխհարաբերությունների գծով կողմերի իրավունքների, պարտավորությունների և պատասխանատվության շրջանակը, ծառայությունների մատուցման անվտանգության կանոնները և երաշխիքները, և հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա), որը համարվում է Հաճախորդի կողմից ընդունված (ակցեպտավորված) Բանկի սահմանած ձևանմուշով Հաճախորդի ստորագրած/վավերացրած համապատասխան

փաստաթուղթ (Պայմանագիրը, Դիմում-պայմանագիրը, Հայտը կամ Դիմումը) Բանկ ներկայացվելու պահից, այդ թվում՝ Պայմաններն ընդունելու մասին Հաճախորդի հաստատումը Բանկի համար ընդունելի եղանակով Բանկ ներկայացվելու պահից և/ կամ տվյալ Ծառայությունից օգտվելու համար Հաճախորդի կողմից համապատասխան գործողություն կատարելու միջոցով, այդ թվում՝ Համակարգի միջոցով:

Սակագներ՝ Բանկի կողմից հաստատվող և ժամանակ առ ժամանակ փոփոխվող փաստաթուղթ, որը նախատեսում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց Հաճախորդից գանձվող վճարների տեսակները, դրանց գանձման կարգն ու չափերը, ինչպես նաև տվյալ ծառայության այլ հատուկ պայմանները, որոնք համարվում են Պայմանների անբաժանելի մաս: Առանձին Հաճախորդների կամ Հաճախորդների խմբերի համար Բանկը կարող է սահմանել ընդհանուր կամ անհատական սակագներ:

Բանկային օր՝ (այսուհետ նաև՝ գործառնական օր) աշխատանքային կամ ոչ աշխատանքային օր, երբ Բանկը մատուցում է բանկային ծառայություններ: Բանկում բանկային օրն սկսվում է Երևանի ժամանակով ժամը 9:30-ին և ավարտվում 16:30-ին, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում կամ պայմանագրերում:

Համակարգ՝ ինտերնետային, բջջային, էլեկտրոնային-փոստային (Պայմանագրով, Դիմում-պայմանագրերով սահմանված դեպքերում) և այլ միջավայրերում Բանկի կողմից առաջարկվող գործիքներ և համակարգեր, այդ թվում՝ Հավելված, հարթակ, որոնք հնարավորություն են տալիս էլեկտրոնային կապի, ինտերնետ-կապի, հեռախոսակապի միջոցով կամ այլ կերպ օգտվել բանկային ծառայություններից՝ առանց Բանկ այցելելու: Համակարգերի/Հարթակների տեսակները, դրանց օգտագործման պայմանները և կանոնները հրապարակվում են Կայքում կամ համապատասխան Համակարգից օգտվելու համար սահմանված այլ կայքերում, ծրագրային ապահովման միջոցներում և/կամ բջջային հավելվածներում և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:

Հավելված՝ «Յունի մոբայլ» տիրույթում մատչելի առցանց ծրագրային ապահովում, բջջային հավելված, որը հնարավորություն է տալիս Հաճախորդին սմարթֆոնի կամ համապատասխան հնարավորություններ ունեցող այլ սարքի միջոցով օգտվել բանկային ծառայություններից:

Շահագործման Ուղեցույց՝ Բանկի կողմից սպասարկվող Համակարգերում գրանցման և դրանց շահագործման տեխնիկական ընթացակարգեր, կանոններ /առկայության դեպքում/:

Անձնական տիրույթ՝ Հաճախորդի անունով և տվյալներով ծրագրային միջավայր, որը վերջինս կարող է օգտագործել անձնական օգտագործման տեխնիկական սարքի (սմարթֆոն, համապատասխան հնարավորություններ ունեցող այլ սարք) կամ ծրագրային գործիքի (web browser և այլն) օգնությամբ Համակարգով առաջարկվող ծառայություններից օգտվելու նպատակով:

Պայմանագիր՝ Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու նպատակով Բանկի հետ կնքվող գրավոր գործարք (գրավոր համաձայնություն), որն ուղղված է կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը: Բանկի կողմից կարող է սահմանվել Դիմում-պայմանագրի ձև, որը նախատեսում է նաև Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու նպատակով համապատասխան պայմանագիր կնքելու առաջարկություն պարունակող դիմում:

Տեղեկատվական ամփոփագիր՝ Բանկի կողմից տրամադրվող Ծառայությունների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկություններ պարունակող ամփոփաթերթեր:

FATCA համաձայնագիր՝ FATCA հայտարարագիր՝ «Օտարերկրյա հաշիվների հարկման համապատասխանության մասին» (Foreign Account Tax Compliance Act, այսուհետ՝ FATCA) ԱՄՆ օրենքի պահանջների պահպանման նպատակով ստորագրվող ձև, որով տրվում է նաև համաձայնություն հաճախորդի անձնական տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը և ծննդավայրը, քաղաքացիությունը, անձը հաստատող փաստաթուղթը, ՀՎՀՀ, բնակության վայրը (գրանցման և փաստացի բնակության), հեռախոսահամարը, ինչպես

նաև հարցաթերթիկում նշված այլ տեղեկությունների մշակման համար, ներառյալ՝ անձնական տվյալների հավաքագրումը, գրանցումը, համակարգումը, կուտակումը, պահպանումը, ճշտումը (թարմացումը, փոփոխումը), հանումը, օգտագործումը, արգելափակումը, ջնջումը և ոչնչացումը ավտոմատացված միջոցների օգտագործմամբ կամ առանց դրանց և ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելուց հետո FATCA-ի իմաստով ԱՄՆ քաղաքացիների և/կամ հարկային ռեզիդենտների տվյալների՝ օտարերկրյա հարկային մարմիններին՝ այդ թվում՝ ԱՄՆ հարկային ծառայությանը (IRS) կամ օտարերկրյա հարկային գործակալներին, փոխանցման (տարածումը, տրամադրումը, հասանելիության ապահովումը), ինչպես նաև նշված անձանց գործարքների, հաշիվների և ներդրումների մասին տեղեկությունների փոխանցման համար:

W-9՝ Request for Taxpayer Identification Number and Certification- ԱՄՆ հարկային ձևաթուղթ, որը լրացվում է «ԱՄՆ անձանց» կողմից ԱՄՆ-ում հարկային կարգավիճակը հաստատելու և որոշակի մանրամասներ ներկայացնելու համար: <https://www.irs.gov/pub/irs-pdf/fw9.pdf>

Հաշիվ՝ Բանկի կողմից առաջարկվող քարտային, հաշվարկային, ընթացիկ, այդ թվում խնայողական, ավանդային և ՀՀ օրենսդրության իմաստով բանկային հաշիվ համարվող այլ հաշիվներ:

Վճարային համակարգ՝ ArCa (ԱրՔա), Visa, MasterCard և այլ միջավայրերում կիրառվող ու ՀՀ օրենսդրության համաձայն այդպիսին համարվող վճարահաշվարկային համակարգեր:

Քարտ՝ Visa կամ MasterCard տեսակի միջազգային և ԱրՔա տեղական վճարային համակարգերի ներքո թողարկված համապատասխան տեսակի վճարային քարտ:

Վճարային սահմանաչափ՝ Քարտային հաշվի մնացորդի և Վարկային սահմանաչափի հանրագումարը, որից Հաճախորդը կարող է օգտվել:

Վճարային սահմանաչափի գերաձախս՝ Վճարային սահմանաչափը գերազանցող գործարքի կատարման արդյունքում առաջացած գերաձախս:

Քարտային հաշիվ՝ Բանկում բացված և քարտ/եր/ին կցված հաշիվ:

Ավանդային հաշիվ՝ Ժամկետային ավանդ (այսուհետ՝ Ավանդ) ընդունելիս դրա սպասարկման նպատակով բացված ավանդային հաշիվ:

Դրամարկղային ծառայություններ՝ կանխիկ դրամով իրականացվող գործառնությունների սպասարկման ծառայություններ, այդ թվում՝ կանխիկ դրամական միջոցների մուտքագրում հաշվին, ելքագրում հաշվից, ոչ հաշվետեր հաճախորդների կողմից դրամական փոխանցումների իրականացում, կոմունալ վճարումների իրականացում, դրամական միջոցների փոխարկումներ և այլն:

Կանխիկ դրամ՝ շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև շրջանառությունից հետ կանչված և հանված, սակայն փոխանակման ենթակա ՀՀ դրամը, արտարժույթը՝ թղթադրամների և մետաղադրամների տեսքով:

Արժեքներ՝ կանխիկ դրամ և այլ արժեքներ:

Այլ արժեքներ՝ ՀՀ դրամով կամ արտարժույթով արտահայտված վճարային արժեթղթեր, վճարահաշվարկային փաստաթղթեր, թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ, հուշադրամներ, թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, հաճախորդներից ի պահ կամ գրավ ընդունած արժեքներ, ինչպես նաև այլ արժեքներ կամ արժեքավոր իրեր, որոնց պահպանությունը Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով նախատեսված է դրամապահոցում:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1 Պայմանները, Պայմանների ներքո Ծառայությունների տրամադրման Պայմանագրերը (Դիմում-պայմանագրերը) հանդիսանում են հրապարակային առաջարկ (օֆերտա), որը համարվում է Հաճախորդի կողմից ընդունված (ակցեպտավորված)՝ Պայմանները, հայտերը,

դիմումները, Դիմում-պայմանագրերն ընդունելու մասին Հաճախորդի ստորագրումը և/կամ էլեկտրոնային հաստատումը Բանկի համար ընդունելի և տվյալ բանկային ծառայության համար սահմանված եղանակով Բանկ ուղարկելու/ներկայացվելու պահից և/ կամ տվյալ ծառայությունից օգտվելու համար Հաճախորդի կողմից համապատասխան գործողություն կատարելու միջոցով և այդ պահից, Պայմանների, Ծառայությունների համար Բանկի կողմից սահմանված պայմանների և Սակագների հետ միասին, համարվում է Կողմերի միջև կնքված պայմանագիր:

2.2 Պայմաններում չնկարագրված, այդ թվում՝ Համակարգով կամ Բանկի կողմից հրապարակայնորեն հասանելի դարձրած ծառայությունների պայմանները, Բանկը սահմանում և հրապարակում է առանձին՝ այդ ծառայությունների համար նախատեսված համակարգում:

2.3 Պայմանները գերակա են, և Պայմանների ներքո Բանկի կողմից հաստատված և հետագայում հաստատվող փաստաթղթերի տիպային/օրինակելի ձևերը, Ծառայությունների պայմանները, Սակագները գործում են այնքանով, որքանով չեն հակասում Պայմաններին, եթե այդպիսի տիպային ձևերով, պայմաններով, սակագներով այլ բան նախատեսված չէ:

2.4 Հաճախորդը կարող է ծանոթանալ Պայմաններին Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում տեղադրված տեղեկատվական վահանակներից, ինչպես նաև՝ Բանկի Կայքից, որտեղ տեղադրված Պայմաններն ունեն նույն իրավաբանական ուժ ու կիրառելիություն: Հակասությունների դեպքում գերակայում է Կայքում հրապարակված տարբերակը:

2.5 Կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են Պայմաններով սահմանված կարգով, սակայն Պայմաններից տարբերվող դրույթների մասով կարող են կարգավորվել առանձին պայմանագրով կամ համաձայնագրով, որը Կողմերի համաձայնությամբ կարող է կնքվել ծառայության տրամադրման և սպասարկման ցանկացած փուլում:

2.6 Որոշ Հաճախորդների համար կարող են սահմանվել սույն Պայմաններից տարբերվող պայմաններ:

2.7 Այն դեպքում, երբ Բանկի կողմից առանձին ծառայությունների մատուցման համար սահմանված են առանձին պայմաններ և/կամ պայմանագրեր՝ դրանք գործում են ի լրումն սույն Պայմանների: Սույն Պայմանները համարվում են այդ պայմանների անբաժանելի մասը, և կարգավորում են նաև այլ բանկային ծառայությունների մատուցման հետ կապված Բանկի և հաճախորդի պայմանագրային հարաբերությունները, այնքանով, որքանով այլ բան սահմանված չէ առանձին ծառայություններին վերաբերող հատուկ պայմանագրերով և պայմաններով:

2.8 Այն դեպքում, երբ Ծառայությունից օգտվելու համար դիմումի/հայտի/ ներկայացումը և Պայմանագրի կամ Դիմում-պայմանագրի կնքումը (այդպիսով՝ Ծառայության տրամադրումը) իրականացվում է Համակարգերով կամ հեռահաղորդակցման ցանկացած միջոցով, ապա Ծառայության մատուցման սկիզբ է համարվում Բանկի կողմից Հաճախորդի Դիմումը (Ծառայության հիմնական պայմանները պարունակող) կամ Դիմում- պայմանագիրը (իսկ կիրառության դեպքում՝ համապատասխան ծառայության պայմանագիրը) էլեկտրոնային եղանակով հաստատման/ստորագրման դեպքում էլեկտրոնային հասցեին ուղարկումը, և/կամ Համակարգի/Հավելվածի պարագայում տվյալ պրոդուկտի «Տեղեկատվություն» բաժնում հասանելի դառնալը: Բանկի կողմից առանձին Ծառայությունների պայմաններով, ինչպես նաև Շահագործման ուղեցույցներով և վերաբերելի այլ փաստաթղթերով կարող է սահմանվել դիմումի ներկայացման, Դիմում պայմանագրի կնքման և Ծառայությունների պայմանները ընդունելու որոշակի ընթացակարգ, որն ենթադրում է նույնականացման հավելյալ միջոցների գործադրում, հաճախորդի գործողությունների իսկությունը և արժանահավատությունն առավելագույնս ստուգելու նպատակով:

2.9 Պայմաններում եզակի թվով սահմանված եզրույթներն (բառերը) արտահայտում են նույնի հոգնակի թիվը ու հակառակը:

2.10 Հաճախորդի սպասարկման գործառնական օրերի և ժամերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Կայքում: Պայմանների իմաստով գործառնական օր է

համարվում Հաճախորդի սպասարկման համար սահմանված օրերն ու ժամերը, իսկ աշխատանքային օր է համարվում հնգօրյա աշխատանքային շաբաթվա ռեժիմում՝ ժամը 9:00-18:00: Բանկի որոշ մասնաճյուղերի համար կարող են սահմանվել Հաճախորդների սպասարկման տարբերվող աշխատանքային ռեժիմներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Կայքում:

2.11 Համակարգում Հաճախորդը սպասարկվում է շուրջօրյա ռեժիմով՝ բացառությամբ ՀՀ տարածքում փոխանցումների և միջազգային փոխանցումների, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և դեպքերում լրացուցիչ մշակում, հաստատում պահանջող գործարքների, որոնց մասով սպասարկումն իրականացվելու է գործառնական օրվա ընթացքում, որը Բանկը սահմանում է ինքնուրույն:

2.12 Վճարային համակարգերի կանոններից և տեխնիկական հնարավորություններից կախված, քարտային և այլ հաշիվների, ինչպես նաև այլ գործառնություններին առնչվող որոշ տեղեկություններ/հավաստումներ կարող են արտացոլվել կամ թարմացվել հետաձգումով: Որևէ ծրագրում առկա խափանումների պարագայում Բանկը կարող է տեղեկացնել պաշտոնական Կայքի, Համակարգերով ուղարկվող ծանուցումների միջոցով կամ Բանկի նախընտրած այլ եղանակով:

2.13 Ծառայություններից, այդ թվում՝ Համակարգից օգտվելու համար Հաճախորդից կարող են գանձվել Սակագներով սահմանված չափով վճարներ, որոնց վճարման ժամկետները և կարգը սահմանվում են Պայմաններով (Ծառայությունների պայմաններով), Տեղեկատվական ամփոփագրերով և/կամ Սակագներով:

2.14 Հաճախորդը պարտավորվում է կատարել բանկային Ծառայությունների տրամադրման պայմաններով, Դիմում-պայմանագրով և Կանոններով սահմանված պահանջները: Ընդ որում՝ սույն պահանջների խախտմամբ կատարված գործառնությունների պատճառով Հաճախորդի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

2.15 Եթե Հաճախորդը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում Պայմաններով, Դիմում-պայմանագրերով կամ առանձին պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, ապա նշված պարտավորությունները կարող են կատարվել Հաճախորդի՝ Բանկում առկա բանկային/քարտային ՀՀ դրամային հաշիվների մնացորդների հաշվին, իսկ նշված հաշիվներին բավարար միջոցների բացակայության դեպքում՝ նաև արտարժույթային հաշիվներից (որի դեպքում արժույթների փոխարկումն իրականացվում է փոխարկվող արժույթների՝ փոխարկման պահի դրությամբ Բանկում սահմանված համապատասխան փոխարժեքով)՝ առանց Հաճախորդի կողմից Բանկին ուղղված վճարման համապատասխան կարգադրություններ ստանալու, որի ապահովման համար Հաճախորդն իրավունք է վերապահում Բանկին Դիմում-պայմանագրից, Պայմաններից, Սակագներից, առանձին ծառայության պայմանագրից բխող ցանկացած դրամական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում իր՝ Բանկում սպասարկվող հաշիվներից անվիճելի/անակցեպտ կարգով գանձել պահանջվող պարտքի գումարը: Սույն կետը Հաճախորդի կողմից հետագայում չի կարող վկայակոչվել և հիմք հանդիսանալ Բանկի կողմից տուժանքի հաշվարկման և գանձման փաստը վիճարկելու համար:

2.16 Հաճախորդը պատասխանատու է Բանկի կրած բոլոր այն ծախսերի, կորուստների և վնասների համար, որոնք առաջացել են Պայմաններով սահմանված՝ Հաճախորդի պարտավորությունները վերջինիս կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով:

2.17 Բանկի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունների առկայության դեպքում վերջինիս կողմից Բանկ ներկայացված հանձնարարականը/գործարքը կարող է չկատարվել կամ կասեցվել:

2.18 Հաճախորդը կարող է միակողմանիորեն լուծել Բանկի հետ կնքված Դիմում-պայմանագիրը (այդ թվում՝ փակել Բանկում իր հաշիվները)՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով Բանկին և մարելով տվյալ Դիմում-պայմանագրի հետ կապված՝ Բանկի նկատմամբ ունեցած

պարտավորություններն ամբողջությամբ: Բանկը կարող է հրաժարվել Դիմում-պայմանագիրը լուծելուց, այդ թվում՝ Հաշիվը փակելուց, եթե Հաշվի վրա դրված են արգելանքներ կամ այլ սահմանափակումներ, կամ Հաշիվն անհրաժեշտ է Հաճախորդի կողմից օգտագործվող այլ ծառայություններից օգտվելու համար, կամ Հաճախորդն ունի չկատարված պարտավորություններ Բանկի հանդեպ:

2.19 Բանկի կողմից մատուցվող ծառայությունների ապաստիվացման կամ դադարեցման դեպքում վճարված միջնորդավճարները և այլ վճարները վերադարձման ենթակա չեն, եթե այլ բան սահմանված չէ Սակագներով և/կամ Հաճախորդի հետ կնքված Դիմում-պայմանագրերով:

2.20 Բանկն ապահովում է Հաճախորդի կողմից իրականացվող գործառնությունների (այդ թվում՝ իր ցանկացած հաշվով), ցանկացած հաշիվների մնացորդի, ինչպես նաև Հաճախորդին սպասարկման կապակցությամբ Հաճախորդի վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը՝ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

2.21 Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, պարբերականությամբ և կարգով Հաճախորդին տրամադրում է Ծառայությունների վերաբերյալ քաղվածք (այսուհետ՝ Քաղվածք) փոխհամաձայնեցված կարգով վերջինիս կողմից նախընտրելի եղանակով և հասցեով:

2.22 Բանկն իրավունք ունի սահմանափակել Բանկի որոշակի ծառայություններից օգտվող անձանց/Հաճախորդների շրջանակը՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ և իր ներքին իրավական ակտերով սահմանված պահանջները:

2.23 Բանկն իրավունք ունի մերժել (կասեցնել) Հաճախորդի գործարքի կատարումը և/կամ մինչև Հաճախորդի կողմից համապատասխան փաստաթղթերի համալրումը կամ պահանջների կատարումը կամ Բանկի կողմից Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ավարտը՝ ժամանակավորապես սահմանափակել այդ հաշիվներով գործառնությունները, մերժել Հաճախորդին Ծառայության տրամադրումը, Հաճախորդի հետ իրավահարաբերությունների հաստատումը, դադարեցնել Հաճախորդի հետ ձևավորված իրավահարաբերությունները կամ միակողմանիորեն՝ Բանկի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով սահմանված կարգով դադարեցնել Հաճախորդին ծառայության տրամադրումը, այդ թվում՝ տրված հանձնարարականի կատարումը, ներառյալ՝ փակել Հաճախորդի Հաշիվները՝ պահանջելով կատարելու տվյալ պահին առկա վճարման պարտավորությունները (նախատեսված լինելու դեպքում), այդ թվում՝ Վճարային սահմանաչափը գերաձախած գումարները, Բանկի կամ վճարահաշվարկային համակարգերի կողմից վճարման հանձնարարականը մերժելու կամ սահմանափակելու արդյունքում Բանկի կրած ծախսերը/վնասները ինչպես նաև մինչև վճարման օրը հաշվարկված տուժանքի գումարները՝ հետևյալ դեպքերում.

2.23.1 Հաճախորդի կողմից խախտվել են Պայմաններով, Ծառայությունների տրամադրման պայմաններով, կանոններով, Տեղեկատվական ամփոփագրերով, ինչպես նաև Դիմում-պայմանագրով նախատեսված դրույթներից որևէ մեկը,

2.23.2 Բանկն ունի կասկածներ տվյալ գործարքի՝ երրորդ անձի կողմից կատարվելու կամ Ծառայությունից՝ երրորդ անձի կողմից անօրինական օգտվելու վերաբերյալ,

2.23.3 Խախտվել են Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ ՀՀ օրենսդրության և ՀՀ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները,

2.23.4 Հաճախորդի գործունեությունը կամ վերջինիս հետ գործարար հարաբերությունը Բանկի կարծիքով կարող է որևէ կերպ գործընկեր կամ միջազգային կազմակերպությունների մոտ առաջացնել Բանկի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ոչ արդյունավետ մեխանիզմների կիրառման կասկածներ և/կամ բացասական ազդեցություն ունենալ Բանկի հեղինակության վրա (օրինակ, եթե Հաճախորդը կամ նրա հետ փոխկապակցված անձինք հայտնվում են ՄԱԿ Անվտանգության Խորհրդի, ԱՄՆ կամ ԵՄ կամ այլ հատուկ ցուցակված անձանց (սանկցիոն) ցանկերից որևէ մեկում),

2.23.5 Հաճախորդի կողմից փակման դիմում է ներկայացվել,

2.23.6 Առկա են ՀՀ նախատեսված այլ հիմքեր:

2.24 Առանձին Ծառայության գծով Պայմանագրով, Դիմում-պայմանագրով, Պայմաններով, Սակագներով, Տեղեկատվական ամփոփագրերով և/կամ Ծառայությունների կանոններով կարող են սահմանվել նաև այլ, ներառյալ՝ վերոնշյալ հիմքերից տարբերվող այլ հիմքեր: Ընդ որում, Բանկի՝ սույն Պայմանների 2.23 կետում նշված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

2.25 Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ անձի կողմից կրած ուղղակի կամ անուղղակի ծախսերի և վնասների համար (ներառյալ բաց թողնված օգուտը), եթե այդպիսիք ամբողջությամբ կամ մասամբ առաջացել են Բանկի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հետ կապված գործողություններ կատարելու հետևանքով, ինչպես նաև ի կատարումն ՀՀ օրենսդրության այլ պահանջների:

2.26 Բանկը պատասխանատու չէ պետական մարմինների գործողությունների կամ անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր), այդ թվում՝ սարքավորումների անսարքության կամ էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհատումների կամ խափանման, ինչպես նաև ծրագրային խափանման հետևանքով առաջացած՝ Հաճախորդի վնասների, կորուստների կամ ուշացման դեպքերի համար:

2.27 Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան ՀՀ կենտրոնական բանկին, այլ բանկերին, վարկային կազմակերպություններին, վարկային բյուրոներին, ինչպես նաև Ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամին՝ վերջիններիս պահանջով կամ իր նախաձեռնությամբ տրամադրել Հաճախորդի և նրա հաշիվների, վարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ՀՀ հարկային մարմինն տրամադրել հարկային մարմնում հաշվառված հարկ վճարողների համար Բանկում հաշիվների բացման, ինչպես նաև փակման մասին տեղեկատվություն, իսկ օտարերկրյա օրենսդրության պահանջներին համապատասխան՝ օտարերկրյա օրենսդրության կարգավորման ոլորտում գտնվող Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել օտարերկրյա իրավասու մարմիններին, այդ թվում՝

- ԱՄՆ FATCA պահանջներով նախատեսված դեպքերում և կարգով Բանկն իրավունք ունի Հաճախորդի և վերջինիս հաշիվների և Բանկին հայտնի եկամուտների մասին տեղեկատվություն տրամադրի ԱՄՆ Ներքին եկամուտների ծառայությանը (Internal Revenue Service, IRS)՝ վերոհիշյալ օրենքի հիման վրա սահմանված Հաշվետվական ձևերով:
- FATCA պահանջների, ինչպես նաև ԱՄՆ քաղաքացիություն ունեցող անձանց, ԱՄՆ ռեզիդենտների, ԱՄՆ կացության կարգավիճակ ունեցող անձանց մասին հաշվետվություն ներկայացնելու, որոշ եկամուտներից հարկային պահումների ենթարկվելու և իրեն՝ որպես ԱՄՆ քաղաքացու կամ հարկային ռեզիդենտին վերաբերող ԱՄՆ օրենսդրության պահանջներին ծանոթ լինելու պարտականությունը կրում է Հաճախորդը:

2.28 Հաճախորդը պարտավորվում է որևէ կերպ չվիճարկել ի կատարումն FATCA-ի Բանկի իրականացրած որևէ գործողություն և չներկայացնել որևէ պահանջ նշված օրենքի շրջանակներում Բանկի կատարած գործողությունների առնչությամբ: Ապագայում ԱՄՆ քաղաքացու և/կամ հարկային ռեզիդենտի կարգավիճակ ձեռք բերելիս Հաճախորդը պարտավոր է այդ մասին Բանկին գրավոր ծանուցել (տեղեկացնել)՝ առավելագույնը 30-օրյա ժամկետում:

2.29 Բանկը պատասխանատվություն չի կրում Բանկի կողմից առաջարկվող ծառայություններից օգտվելիս հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող օպերատորների և այլ անձանց կողմից սահմանված և վերջիններիս համար գանձվող վճարների համար:

2.30 Բանկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանների խախտմամբ կատարված գործառնությունների/գործարքների համար:

2.31 Պայմանները, Սակագները, բանկային ծառայություններին վերաբերող ուղեցույցները,

հավելվածները և այլ փաստաթղթերը, Հաճախորդին մատուցվող ծառայությունների տեսակները և/կամ առցանց մատուցման, այդ թվում՝ Հաճախորդին նույնականացման պայմանները և/կամ կարգը, այդ թվում՝ Բանկի կողմից ծառայությունների մատուցման համար Հաճախորդից պահանջվող փաստաթղթերի ցանկը, բանկային հաշիվների մնացորդների դիմաց հաշվարկվող տոկոսադրույքի չափը սահմանվում և կարող են միակողմանիորեն փոփոխվել Բանկի կողմից, որոնց վերաբերյալ տեղեկությունները հասանելի են Բանկի տարածքում, Համակարգում և/կամ Կայքում, բացառությամբ Հաճախորդի համար անհատական սակագին սահմանելու դեպքերի, որոնք հրապարակման ենթակա չեն:

2.32 Սույն պայմանների 2.31 կետում նշված փոփոխություններն ու լրացումները Բանկն իր հայեցողությամբ հրապարակում է տեղեկատվության այնպիսի միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալու այդ տեղեկություններին: Բանկը փոփոխությունների ու լրացումների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակում է՝

- ինտերնետային և մոբայլ տիրույթներում, Կայքում, և(կամ)
- Բանկի մասնաճյուղերում և Հաճախորդների սպասարկում իրականացնող այլ ստորաբաժանումներում առկա տեղեկատվական վահանակներում հայտարարությունների տեղադրման միջոցով, և (կամ)
- Հաճախորդների էլեկտրոնային փոստային հասցեներով ուղարկելու միջոցով, և(կամ)
- այլ միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս Հաճախորդին ստանալու և հավաստիանալու, որ տվյալ տեղեկությունները ստացել է Բանկից:

2.33 Բանկն իր հայեցողությամբ տեղեկությունները հրապարակում է վերոհիշյալ միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով: Հաճախորդը համաձայնում է, որ Բանկի ծառայություններից օգտվել շարունակելը (ներառյալ՝ հաշիվները չփակելը՝ առանց դրանցով գործառնություններ կատարելու) նշանակում է, որ փոփոխություններն ընդունվել են Հաճախորդի կողմից: Սույն կետով սահմանված միակողմանիորեն կատարվող փոփոխություններն ուժի մեջ մտնելու ժամկետի և սույն Պայմանների հետ միասին Հաճախորդի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մաս կազմող այլ փաստաթղթերով սահմանված՝ միակողմանիորեն կատարվող փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետի միջև հակասություններ առաջանալու դեպքում գործում է սույն կետով սահմանված ժամկետը:

2.34 Հաճախորդի համար անհատական սակագին սահմանվելու դեպքում, տվյալ սակագինն ուժի մեջ է մտնում Բանկի կողմից սահմանված ժամկետում:

2.35 Եթե մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը Հաճախորդը գրավոր չի տեղեկացնում Բանկին՝ Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները դադարեցնելու իր ցանկության մասին, ապա այդ փոփոխությունները համարվում են ընդունված (ակցեպտավորված) Հաճախորդի կողմից:

2.36 Ընդունելով Սույն Պայմանները՝ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից հարցում կատարվի «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ և անհրաժեշտ տեղեկատվության տիրապետող այլ կազմակերպություններին և վերջիններիս խնդրում է Բանկին տրամադրել իր ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք Բանկի կողմից կարող են հաշվի առնվել Հաճախորդի հետ վարկային (փոխառության և այլն) պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս: Ինչպես նաև տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից վարկային, փոխառության և այլ պայմանագիր կնքելու դեպքում տվյալ պայմանագրի գործողության, ինչպես նաև իր ու Բանկի միջև գործարար հարաբերությունների ողջ ընթացքում ցանկացած պահի առանց Հաճախորդին նախապես տեղյակ պահելու «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ և անհրաժեշտ տեղեկատվության տիրապետող այլ կազմակերպությունները Բանկին տրամադրեն իր ապագա ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ:

2.37 Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ անհրաժեշտության դեպքում Բանկը կատարի մեկանգամյա և պարբերական հարցումներ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ»

ՓԲԸ՝ Բանկի ու իր միջև կնքված վարկային (փոխառության և այլն) պայմանագրի գործողության ողջ ընթացքում, ելնելով հետևյալ նպատակներից՝

- վարկի տրամադրում (տվյալ հարցումը կրում է մեկանգամյա բնույթ, տվյալ հարցումը չի ազդում Բանկի կողմից կիրառվող սեփական սքրի գնահատականի վրա, սակայն կարող է ազդել այլ բանկերի և/կամ վարկային կազմակերպությունների կողմից կիրառվող վարկային սքրի գնահատականի վրա),
- գործող վարկի մոնիտորինգ (տվյալ հարցումն իրականացվում է պարբերաբար և չի ազդում վարկային սքրի գնահատականի վրա):

2.38 Հաճախորդն ընդունում է, որ վարկի տրամադրման և գործող վարկի մոնիտորինգի նպատակով կատարվող հարցումների հետ համաձայնությունը հանդիսանում է պարտադիր պայման իր վարկային հայտը դիտարկելու համար, գիտակցում է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել Բանկի կողմից կայացված համապատասխան որոշման վրա: Նաև գիտակցում է, որ Բանկի կողմից կատարվող հարցումները կարող են ազդել իր վարկային սքրի գնահատականի վրա այլ բանկերում և/կամ վարկային կազմակերպություններում:

2.39 Հաճախորդի անունից հանդես գալու համար Հաճախորդի ներկայացուցիչների լիազորագրերը իրավաբանական ուժ կունենան միայն այն դեպքերում, եթե վավերացված լինեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կամ հաստատված լինեն Բանկի կողմից ընդունելի՝ ներքին իրավական ակտերով սահմանված այլ եղանակով, իսկ ՀՀ տարածքից դուրս տրված լինելու դեպքում՝ ունենան նաև այլ վավերացում (ապոստիլ, հյուպատոսական վավերացումներ/հաստատումներ)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 3. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՈՒՐԿԱՆ

3.1 Սույն Պայմանները սահմանում են Բանկի կողմից հաշիվների բացման և վարման (սպասարկման), այլ բանկային ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները և կարգավորում են դրանց հետ կապված Բանկի և Հաճախորդի միջև ծագած պայմանագրային հարաբերությունները:

3.2 Պայմանները կարգավորում են Բանկի և Հաճախորդի միջև ծագած/ծագելիք իրավահարաբերությունները Հաճախորդի կողմից Ծառայություններից օգտվելիս, այդ թվում՝ Համակարգում գրանցվելիս, և/կամ Համակարգում Ծառայություններից օգտվելիս, ինչպես նաև սահմանում են Ծառայությունների տեսակները, նկարագիրը, Համակարգերից օգտվելու անվտանգության կանոնները:

3.3 Բանկի ծառայություններից օգտվելով, ինչպես նաև Բանկի հետ պայմանագիր (ներառյալ՝ դիմում-պայմանագրեր) ստորագրելով կամ Համակարգի միջոցով Բանկի մատուցած ցանկացած ծառայությունից օգտվելիս՝ Հաճախորդը հայտարարում է, որ ընդունում է սույն Պայմանները և Սակագները, հասկացել է դրանց իմաստը, տեղյակ է, որ դրանք պարտադիր են Հաճախորդի և Բանկի համար և ունեն պայմանագրի ուժ:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1 Բանկի ծառայություններից օգտվելով՝ Հաճախորդն երաշխավորում և հավաստիացնում է, որ գործառնությունների կնքման և կատարման համար ունի անհրաժեշտ իրավունակություն և գործունակություն:

4.2 Կողմերը հավաստիացնում են, որ Պայմաններն իրենց համար իրավաբանորեն պարտադիր և վավեր են և իրենց հայտնի չէ որևէ հանգամանք, որը կարող է հանգեցնել սույն Պայմաններից բխող պարտավորությունների անվավերությանը:

4.3 Եթե որևէ գործարքն իրականացնելու համար Բանկի կողմից սահմանված է փաստաթղթերի որոշակի օրինակելի ձև, Բանկն իրավունք ունի չընդունել այդ ձևին չհամապատասխանող ցանկացած փաստաթուղթ և հրաժարվել գործառքի իրականացումից: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերում տեղեկությունների անճշտության համար:

4.4 Բանկն իրավունք ունի պահանջել՝ թարգմանել օտար լեզուներով ներկայացված փաստաթղթերը հայերեն լեզվով, ինչպես նաև՝ սահմանված կարգով վավերացնել դրանք: Բանկն իրավունք ունի պատճենել կամ իր մոտ պահել փաստաթղթերը՝ առանց Հաճախորդի ծախսերը հատուցելու պարտավորության:

4.5 Բանկի ծառայություններից օգտվելիս՝ Հաճախորդը պարտավոր է ներկայացնել փաստաթղթեր և տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում Բանկին պատշաճ կերպով նույնականացնել Հաճախորդին և ստուգել տվյալ գործարքն իրականացնելու Հաճախորդի իրավասությունը:

4.6 Հաճախորդը պայմանագրային կամ այլ գործարար հարաբերություններ հաստատելու, Ծառայություններից և Համակարգից օգտվելու համար պետք է նույնականացվի Բանկի կողմից՝ ապահովելով որոշակի քայլերի հաջորդականություն, որոնք սահմանում է Բանկը, ընդ որում Բանկն իրավունք ունի հրաժարվել Հաճախորդի հետ գործարար հարաբերություններ հաստատելուց, Բանկի ներքին քաղաքականությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, այդ թվում՝ եթե կասկածներ կան Հաճախորդի ինքնության, ինչպես նաև վերջինիս կողմից իրականացվող գործառնությունների իրավաչափ և /կամ օրինական լինելու վերաբերյալ:

4.7 Հաճախորդի նույնականացման համար Բանկն իրավունք ունի պահանջել պարտադիր համարվող տեղեկատվություն, ինչպես նաև իրականացնել այլ գործողություններ, այդ թվում՝ Հաճախորդից պահանջել այլ տվյալներ, ծայնային/տեքստային/տեսաձայնագրություն պահանջող հաստատումներ և փաստաթղթեր, իսկ Հաճախորդը պարտավոր է ներկայացնել իրեն նույնականացնելու համար Բանկի կողմից պահանջված այլ տեղեկություններ, տվյալներ և փաստաթղթեր:

4.8 Բանկի որոշակի ծառայությունից օգտվելու համար Հաճախորդի կողմից Բանկի սահմանած օրինակելի/տիպային փաստաթղթի (ներառյալ, սակայն չսահմանափակվելով, դիմումները, հայտերը, Դիմում-պայմանագրերը, պայմանագրերը)՝ ստորագրումը/վավերացումը, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով կամ սահմանված դեպքերում և պայմաններով՝ Հաճախորդի կողմից ծառայությունից օգտվելու նպատակով որոշակի գործողության կատարումը փաստում է Հաճախորդի կողմից Պայմանների, Բանկի Սակագների և/կամ առանձին ծառայության համար ծառայությունը մատուցողի (երրորդ անձի) կողմից սահմանված սակագնի և պայմանների ընդունումը:

4.9 Հաճախորդը Դիմում-Պայմանագիրը, համապատասխան ծառայություններից օգտվելու հայտերը, դիմումները, պայմանագրերը ստորագրելիս ծանոթանում է Պայմաններին, Սակագներին: Դիմում-պայմանագր/եր/ի անբաժանելի մասն են Պայմանները, տեղեկատվական ամփոփագրերը, Սակագները, ուղեցույցները, Կանոնները, Կայքի, բջջային հավելվածների և այլ ծրագրային ապահովման օգտագործման կանոնները և պայմանները, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը:

4.10 Եթե տվյալ Ծառայությունից օգտվելու համար դիմումի/հայտի/ ներկայացումը և/կամ Դիմում-պայմանագրի կնքումը (այդպիսով՝ Ծառայության տրամադրումը) իրականացվում է Համակարգերով կամ հեռահաղորդակցման այլ միջոցով, ապա Ծառայության մատուցման սկիզբ է համարվում Բանկի կողմից Հաճախորդի Դիմումը (Ծառայության հիմնական պայմանները պարունակող) կամ Դիմում պայմանագիրը (իսկ կիրառության դեպքում՝ համապատասխան ծառայության պայմանագիրը) էլեկտրոնային եղանակով հաստատման/ստորագրման դեպքում էլեկտրոնային հասցեին ուղարկումը, և/կամ

Համակարգի/Հավելվածի պարագայում տվյալ պրոդուկտի «Տեղեկատվություն» բաժնում հասանելի դառնալը: Բանկի կողմից առանձին Ծառայությունների պայմաններով, ինչպես նաև Շահագործման ուղեցույցներով և վերաբերելի այլ փաստաթղթերով կարող է սահմանվել դիմումի ներկայացման, Դիմում-պայմանագրի կնքման և Ծառայությունների պայմանները ընդունելու որոշակի ընթացակարգ, որը ենթադրում է նույնականացման հավելյալ միջոցների գործադրում, հաճախորդի գործողությունների իսկությունը և արժանահավատությունն առավելագույնս ստուգելու նպատակով:

4.11 Հաճախորդի կողմից Հայտի ներկայացումից հետո այն Բանկի կողմից ստուգվում է: Հայտի ստուգման բացասական արդյունքի և, հետևաբար, տրված հանձնարարականի իրականացման մերժման վերաբերյալ Հաճախորդը ծանուցվում է տեղում կամ Համակարգի միջոցով՝ Համակարգում փաստաթղթի կարգավիճակի համապատասխան փոփոխման և/կամ Համակարգի միջոցով գեներացված ծանուցման միջոցով:

4.12 Հաճախորդին նույնականացնելիս՝ Բանկն ապահովում է համապատասխան փաստաթղթի, դրա վրա առկա ստորագրության կամ ներկայացված անձի նույնականացումը տեսողական զննության միջոցով: Բանկը պարտավոր չէ կիրառել նույնականացման հատուկ միջոցներ և պատասխանատու չէ Հաճախորդի անունից կատարված գործարքների արդյունքում Հաճախորդի կորուստների և վնասների համար, եթե տվյալ իրավիճակում խելամտորեն հնարավոր չէր պարզել, որ գործառքը չէր բխում Հաճախորդի իրական կամքից:

4.13 Հաճախորդը կարող է իր Հաշիվների տնօրինման իրավունքը փոխանցել այլ անձի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված, Բանկի համար ընդունելի լիազորագրի հիման վրա: Լիազորված անձի միջոցով գործառնություններ կատարելիս՝ Հաճախորդը պարտավոր է ապահովել, որ լիազորագիրը հստակ ձևով արտահայտի Հաճախորդի կամքը Հաճախորդի անունից տվյալ գործառնությունը կատարելու համար որևէ երրորդ անձին իրավունք ընձեռելու վերաբերյալ: Հաճախորդը այլ անձին տրված լիազորագիրը հետ կանչելու դեպքում, պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել Բանկին (լիազորագրի հիման վրա գործարք կատարող Բանկի մասնաճյուղին): Բանկը պատասխանատվություն չի կրում լիազորված անձի միջոցով կատարված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, եթե Լիազորված անձի կողմից համապատասխան գործողությունների իրականացման պահին Բանկը (լիազորագրի հիման վրա գործարք կատարող Բանկի մասնաճյուղը) չի ստացել Հաճախորդի գրավոր ծանուցումը լիազորագիրը հետ կանչելու մասին: Հաճախորդը Բանկի առջև ամբողջ ծավալով պատասխանատվություն է կրում իր կողմից լիազորված անձանց գործողությունների համար: Հայերենից տարբերվող այլ լեզվով լիազորագիր ներկայացնելու դեպքում՝ Բանկ պետք է ներկայացվի նաև լիազորագրի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանված տարբերակ, ընդ որում Բանկն իր հայեցողությամբ կարող է ընդունել լիազորագիր առանց թարգմանություն պահանջելու:

4.14 Հաճախորդը պարտավոր է Բանկ ներկայացնել լիարժեք տվյալներ, որոնք անհրաժեշտ են իր հետ կապ հաստատելու համար, ինչպես նաև՝ տրամադրել այլ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք հրաժեշտության դեպքում պահանջվում են Բանկի կողմից՝ բանկային գործառնությունների կատարման շրջանակներում: Հաճախորդը պարտավոր է անհապաղ գրավոր ծանուցել Բանկին այդ տվյալների բոլոր փոփոխությունների մասին: Տվյալների փոփոխության մասին սահմանված կարգով Բանկին չտեղեկացնելու բացասական հետևանքների ռիսկը կրում է Հաճախորդը:

4.15 Հաճախորդը պարտավոր է անհապաղ Բանկին գրավոր տեղեկացնել բոլոր այն հանգամանքների և իրադարձությունների մասին, որոնք կարող են ազդել Բանկի հետ փոխհարաբերությունների վրա (ներառյալ՝ առանց սահմանափակման՝ Հաճախորդի անվան/անվանման, կազմակերպարավական ձևի, ռեզիդենտության, հասցեի, ներկայացուցիչների և նրանց լիազորությունների ծավալի փոփոխությունները, Հաճախորդի նկատմամբ սնանկության/անվճարունակության վարույթի հարուցումը և այլն)՝ Բանկի պահանջով ներկայացնելով համապատասխան հանգամանքները և իրադարձությունները

հաստատող փաստաթղթեր:

4.16 Բանկը Հաճախորդի վերաբերյալ իր մոտ առկա, այդ թվում՝ Հաճախորդի կողմից ներկայացված տվյալները համարում է հավաստի և հիմնվում է դրանց վրա այնքան ժամանակ, քանի դեռ Հաճախորդը Բանկին պատշաճ կերպով չի տեղեկացրել դրանց փոփոխությունների մասին: Ընդ որում, Հաճախորդը տեղեկացված է, որ փոխանցում ստացողի նույնացումը կարող է իրականացվել ստացողի բանկի կողմից՝ հիմնվելով միայն հաշվեհամարի վրա: Միևնույն ժամանակ, Բանկն իրավունք ունի ստուգել Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկատվությունը, ինչի համար պայմանագրի կնքմամբ Հաճախորդը լիազորում է Բանկին իրականացնել ցանկացած, Բանկի կարծիքով անհրաժեշտ վերստուգում, այդ նպատակով Հաճախորդի անունից հարցումներ կատարել համապատասխան տեղեկատվությանը տիրապետող անձանց և մարմիններին:

4.17 Կողմերն ընդունում են, որ Պայմաններից բխող ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում պետք է լինի գրավոր ձևով, ստորագրված լինի այն ուղարկող կողմի կողմից և պետք է ուղարկվի մյուս կողմի իրեն հայտնի վերջին հասցեով՝ ցրիչի կամ փոստային առաքման միջոցով կամ վերջին հայտնի էլեկտրոնային փոստի հասցեից մյուս կողմի իրեն հայտնի վերջին էլեկտրոնային փոստի հասցեին, բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՀ օրենսդրությամբ, սույն Պայմաններով կամ կողմերի փոխադարձ համաձայնությամբ կոնկրետ պահանջը, ծանուցումը կամ հաղորդումը ուղարկելու համար հաղորդակցման հատուկ կարգ է սահմանված: Հաճախորդի վերջին հայտնի հասցե, այդ թվում՝ վերջին հայտնի էլեկտրոնային փոստի հասցե է համարվում Հաճախորդի կողմից տրամադրված և Բանկում գրանցված վերջին հասցեն: Ընդ որում, Բանկի կողմից ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում, որն ուղարկվում է ցրիչի կամ փոստային առաքման միջոցով մյուս կողմի վերջին հայտնի հասցեին, համարվում է մյուս կողմի կողմից պատշաճ ստացված (հանձնված) նշված կարգով ուղարկման պահից սկսած յոթերորդ օրը, թեկուզև հետագայում պարզվի, որ մյուս կողմը նշված ծանուցումը փաստացի չի ստացել: Բանկի ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում, որն ուղարկվում է մյուս կողմի վերջին հայտնի էլեկտրոնային փոստի հասցեին, համարվում է մյուս կողմի կողմից պատշաճ ստացված նշված կարգով ուղարկման պահից սկսած յոթերորդ օրը, կամ նշված յոթօրյա ժամկետում համապատասխան պահանջը, ծանուցումը կամ այլ հաղորդումը ուղարկած էլեկտրոնային փոստի հասցեին պահանջը, ծանուցումը կամ այլ հաղորդումը ստանալու մասին հավաստում ստանալու օրվանից: Պահանջի, ծանուցման կամ այլ հաղորդման ուղարկման օրը որոշվում է պահանջը, ծանուցումը կամ այլ հաղորդումը պարունակող էլեկտրոնային նամակի ուղարկման օրով:

4.18 Տրամադրելով իր տվյալները Բանկին՝ Հաճախորդը համաձայնում է Բանկից փոստային կապով, էլեկտրոնային փոստով, հեռախոսակապով կամ կապի այլ միջոցներով ստանալ Բանկի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական նյութեր, պայմանագրեր կնքելու առաջարկներ և այլ փաստաթղթեր:

4.19 Բանկն իրավունք ունի ծայնագրել, լուսանկարել կամ տեսագրել Հաճախորդի և Բանկի միջև հեռախոսային խոսակցությունները, Հաճախորդի այցելությունները և Բանկի տարածքում կատարվող գործառնությունների ընթացքը: Այդ ծայնագրությունները, լուսանկարները ու տեսագրությունները պահվում են Բանկում և կարող են ծառայել որպես ապացույց՝ հնարավոր տարածայնությունների լուծման համար:

4.20 Հաճախորդը սույնով տալիս է իր համաձայնությունը Բանկին այլ անձանցից ընդունել Բանկի առջև Հաճախորդի ունեցած դրամական պարտավորությունների կատարմանն ուղղված գումարները և Բանկին ազատում է այդ գործողություններից բխող ցանկացած պահանջներից և պատասխանատվությունից:

4.21 Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց Հաճախորդը վճարումները կատարում է համաձայն Բանկի Սակագների, ընդ որում՝ համապատասխան ծառայությունը արժույթի փոխարկում պահանջելու դեպքում, փոխարկումը կատարվում է համաձայն Բանկի սահմանած փոխարժեքի: Բանկն իրավունք ունի Սակագներով սահմանված վճարները, ինչպես

նաև՝ Հաճախորդին ծառայությունների մատուցման արդյունքում Բանկի կատարած ծախսերը, և Բանկի հետ կնքված պայմանագրերով Բանկի նկատմամբ պարտքեր ձևավորելու դեպքում, համապատասխան գումարները անակցեպտ կարգով՝ առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարությունների գանձել Հաճախորդի Հաշվից: Ընդ որում, Բանկն իրավունք ունի փոխարկել արտարժույթային Հաշվից ելքագրման ենթակա գումարը Բանկի սահմանած փոխարժեքով և գանձել փոխարկման համար Սակագներով սահմանված վճարը: Այն դեպքում երբ համապատասխան ծառայությունը Բանկի կամքից անկախ հանգամանքներում չի մատուցվել և վճարված գումարը՝ այդ թվում գանձված միջնորդավճարը ենթակա են վերադարձման Հաճախորդին, Հաճախորդի՝ համապատասխան արժույթով հաշվի բացակայության դեպքում Բանկն իրավունք ունի այդ գումարները փոխարկել այն արժույթի, որով Հաճախորդի անվամբ առկա է հաշիվ Բանկում՝ համաձայն փոխարկման պահին Բանկում սահմանված փոխարժեքի և փոխանցել այդ հաշվին:

4.22 Կողմերն ընդունում են, որ Պայմաններով սահմանված դեպքերում էլեկտրոնային եղանակով Հաճախորդին ներկայացվող փաստաթղթերը և տվյալներն ունեն կողմերի ստորագրությամբ ամրագրված թղթային բնօրինակ փաստաթղթի ուժ և նույն իրավական նշանակությունը, համարվում են պաշտոնապես փոխանցված Հաճախորդին և հիմք են հանդիսանում Հաճախորդի Հաշիվներով գործողություններ կատարելու համար: Այն դեպքում, երբ փաստաթղթերի ներկայացումն իրականացվում է Հեռակառավարման համակարգերի միջոցով՝ սույն կետով սահմանված դրոյթները վերաբերվում են նաև Հաճախորդից նշված համակարգերի միջոցով ստացվող փաստաթղթերին: Ընդ որում, սույն կետում նշված եղանակներով Հաճախորդին տրամադրվող (Հաճախորդից ստացվող) տվյալների (տեղեկատվության) հիման վրա կատարվող գործողություններից (որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուց) բխող իրավական հետևանքների ռիսկը, հնարավոր վնասները, կորուստները և ծախսերը կրում է Հաճախորդը:

4.23 Կողմերն ընդունում են, որ Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ առանց որևէ պատճառաբանության հրաժարվել Դիմում-պայմանագրով վարկային բյուրոյին հարցում կատարելու վերաբերյալ իր կողմից տրված համաձայնությունից՝ Բանկին ներկայացնելով համապատասխան թղթային գրավոր դիմում:

4.24 Եթե Բանկը ստացել է որևէ տեղեկություն, որ Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված Հաճախորդի հաղորդակցման տվյալները, այդ թվում՝ հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե, բնակության հասցե և այլն, Հաճախորդին այլևս չի պատկանում, ապա Բանկն իրավունք ունի, իսկ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը Բանկի կողմից միակողմանիորեն դադարեցնել տվյալ հաղորդակցման միջոցներով Հաճախորդին հաղորդագրությունների, ծանուցումների կամ պայմանագրով կամ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկությունների ուղարկումը: Սույն կետով սահմանված դեպքում հաղորդագրությունների(ծանուցումների) չուղարկման պարագայում Հաճախորդն ընդունում է, որ Բանկին չի ներկայացնելու դրանց չստացման հետ կապված պահանջներ:

4.25 Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Բանկը մշակի (հավաքագրում, ամրագրում, մուտքագրում, համակարգում, պահպանում, օգտագործում և այլն) իր անձնական տվյալները, մասնավորապես, անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշի կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Հաճախորդի ինքնությունը համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, Բանկի հետ պայմանագրեր կնքելու, հետագայում Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու, Բանկի կողմից անցկացվող ակցիաների (առաջարկների), այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Սույն կետի ուժով Հաճախորդը լիազորում է Բանկին իրեն վերաբերելի ցանկացած տեղեկություն, որը հասանելի է դարձել Բանկին, ներառյալ իր անձնական տվյալները, տրամադրել այլ կազմակերպություններին, այդ

թվում՝ Բանկի հետ համագործակցող, որոնց կողմից մատուցվող ծառայություններից օգտվում է Հաճախորդը, և Բանկի գործակալներին, վարկային բյուրոներին, ապահովագրական ընկերություններին կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ այլ անձանց պատկանող տեղեկատվական համակարգերին, տեղեկատվական ընկերություններին (այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ»-ին, Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակին (այսուհետ՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ)), նշված տեղեկությունները ստուգելու, վարկային պատմությունը պարզելու և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ապահովվածություն ստանալու համար: Միաժամանակ Հաճախորդը լիազորում է Բանկին այլ ընկերություններից ու կազմակերպություններից, ինչպես նաև իր աշխատանքային վայրից ստանալ իր անձնական տվյալները, ինչպես նաև տալիս է իր համաձայնությունը «ԷԿԵՆԳ» ՓԲԸ միջոցով իր անձնական տվյալների վերաբերյալ հարցում կատարելու համար:

Հաճախորդը հավաստում է, որ գիտակցում է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել Բանկի կողմից կայացված համապատասխան որոշման վրա:

4.25.1 Անձնական տվյալների մշակման համաձայնությունը համարվում է Հաճախորդի կողմից տրված, և Բանկը ստանում է Հաճախորդի անձնական տվյալները մշակելու իրավունք՝

1) Հաճախորդի՝ Բանկ դիմելու պահից,

2) Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում այդ պայմանագրերով սահմանված գործողությունների կատարման նպատակով,

3) ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ համագործակցող կազմակերպություններին/անհատներին տրամադրելու նպատակով, պայմանով, որ դա անհրաժեշտ է Բանկին համապատասխան ծառայությունը մատուցելու և/կամ Բանկի համար աշխատանքներ կատարելու և/կամ գույք ձեռքբերելու համար և/կամ բոլոր այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակման պահանջն ուղղակիորեն սահմանված է օրենքով:

4.25.2 Հաճախորդի կողմից անձնական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման, կամ անձնական տվյալների ուղղում կամ ոչնչացում (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար) կատարելու պահանջ ներկայացնելու դեպքում՝ Բանկը պարտավորվում է դադարեցնել անձնական տվյալների մշակման գործողությունները կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հաճախորդի և Բանկի միջև առկա չեն չկատարված պարտավորություններ և բացակայում են գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես Հաճախորդի և Բանկի միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Հաճախորդի անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում Հաճախորդի անձնական տվյալները դադարում են մշակվել Բանկի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

4.25.3 Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է պայմանագրերի գործողության ողջ ժամանակահատվածի համար, կամ տվյալներ մշակելու նպատակներն իրականացնելու համար օբյեկտիվորեն անհրաժեշտ ժամկետով:

4.26 Սույն Պայմանների 4.25 կետի դրույթները վերաբերելի են միայն ֆիզիկական անձ հաճախորդներին:

5.1 Հաճախորդը սույնով տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Բանկի հետ հաղորդակցումը, այդ թվում՝ Համակարգի շրջանակներում և/կամ Պայմանների և/կամ Դիմում-Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման, Քաղվածքների տրամադրման և/կամ դրանց վերաբերյալ ցանկացած փոփոխության վերաբերյալ, Բանկն առաջնահերթության կարգով իրականացնում է Հաճախորդի էլեկտրոնային հասցեի օգտագործմամբ ու միջոցով, եթե Բանկի կողմից մատուցվող որևէ ծառայության մասով Հաճախորդի դիմումի համաձայն հաճախորդը չի հրաժարվել վերոնշյալ տեղեկատվությունը էլ. փոստով ստանալու իր իրավունքից և հաղորդակցման՝ Բանկի կողմից կիրառելի այլ եղանակ և հասցե չի ընտրել:

5.2 Հաճախորդն ընդունում է, որ տեղեկատվությունը, ուղարկվող ծանուցումները, քաղվածքները էլեկտրոնային կամ փոստային կապի կամ բջջային հեռախոսակապի կարճ հաղորդագրության (SMS) միջոցով ծանուցման դեպքում Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված՝ վերջինիս հասցեագրված Բանկի հաղորդագրությունը Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին, փոստային հասցեին կամ բջջային հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկվելու դեպքում՝ անկախ այն հանգամանքից, թե Հաճախորդը փաստացի ստանում է այդ տեղեկատվությունը, թե ոչ և երբ է ստանում այդ տեղեկատվությունը: Դիմումով և/կամ Դիմում-Պայմանագրով սահմանված եղանակով և հասցեով ցանկացած ծանուցում համարվում է մյուս կողմին հանձնված էլեկտրոնային եղանակով ծանուցման դեպքում՝ էլեկտրոնային նամակի ուղարկման օրը, իսկ փոստային եղանակով ուղարկման դեպքում՝ ուղարկման պահից յոթերորդ օրը (բացառությամբ Պայմանագրով այլ ժամկետ սահմանված լինելու դեպքերի), թեկուզ հետագայում պարզվի, որ մյուս կողմը փաստացի չի ստացել: Ծանուցման ուղարկման օրը որոշվում է ծանուցման ելքային ամսաթվով կամ փոստային ծառայություններ մատուցող կազմակերպության դրոշմակնիքով: Հաճախորդը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Բանկին իր հասցեի, Բանկին ներկայացված այլ տեղեկություններում և փաստաթղթերում ցանկացած փոփոխությունների մասին, այդ թվում՝ ռեզիդենտության կարգավիճակի փոփոխության մասին: Հաճախորդի կողմից վերոնշյալ պարտավորության չկատարման դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ներկայացված և Բանկի տիրապետման ներքո գտնվող տեղեկությունների կամ փաստաթղթերի հիման վրա Հաճախորդի կողմից կատարված գործողությունների կամ անգործության հետևանքով Հաճախորդի կողմից կրած վնասների համար: Ծանուցման հասցեների փոփոխման դեպքում փոփոխությունների մասին մյուս կողմին չիրազեկելու բացասական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող անձը:

Սույն կետում նշված հասցեների փոփոխման դեպքում՝ ծանուցումները պետք է ապահովվեն փոփոխված հասցեներով՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության՝ նման հարաբերությունները կարգավորող կարգն ու պահանջները ի ապահովումն ինչի՝ Կողմերը պարտավորվում են իրենց հասցեների փոփոխության մասին 5 (հինգ) օրվա ընթացքում գրավոր ծանուցել մյուս Կողմին:

Սույն կետում նշված ծանուցումները համարվում են ստացող Կողմի կողմից պատշաճ հանձնված /պատշաճ ծանուցումներ/, եթե դրանք ուղարկվել են նրա՝ ծանուցումը ուղարկող Կողմին հայտնի վերջին հասցեով:

5.3 Հաճախորդի ներկայացրած Հայտերի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հաճախորդի այլ գործառնությունների մասին Բանկը կարող է տեղեկացնել Հաճախորդին էլեկտրոնային եղանակով, որի մասով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, ներառյալ՝ Համակարգի/Հավելվածի էջերի համապատասխան մասում տեղեկություններ տեղադրելով, էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով: Համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով ուղարկված տեղեկությունները չեն համարվում գովազդ, վերջիններիս միջոցով կարող են ներկայացվել Բանկի նորությունները, Ծառայությունների վերաբերյալ փոփոխությունները և այլ

տեղեկատվություն:

5.4 Բանկն իրավունք ունի օգտագործել Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը և այլ հաղորդակցման տվյալները՝ Հաճախորդին Բանկի կողմից մատուցվող Ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական, գովազդային բնույթի հաղորդագրություններ ուղարկելու նպատակով: Տեղեկատվական բնույթի հաղորդագրությունը կարող է ներառել Հաշիվների քաղվածքները, Բանկի Ծառայությունների պայմանների, Կողմերի միջև հաղորդակցման կարգի, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանման, փոփոխման կամ դադարեցման, Բանկի ծառայությունների և տարեկան տոկոսային եկամտաբերության վրա ազդեցություն ունեցող օրենքների, նորմատիվ իրավական ակտերի, Բանկի ներքին իրավական ակտերի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև Հաճախորդի պարտավորությունների, դրանց առաջացման հիմքերի, մարումների վերաբերյալ և պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Բանկի կողմից կիրառված (կիրառվող) պատասխանատվության միջոցների, դրանց կիրառման կարգի վերաբերյալ տեղեկատվությունը:

5.5 Սույնով Հաճախորդը տալիս է իր անվերապահ համաձայնությունն առ այն, որ Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ Դիմում-պայմանագրից բխող տեղեկությունները/փաստաթղթերը (այդ թվում՝ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները/փաստաթղթերը) հրապարակել և/կամ տրամադրել երրորդ անձանց, եթե դա անհրաժեշտ է Բանկի իրավունքների պաշտպանության համար՝ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

5.6 Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը ստանալու իր կոնտակտային տվյալների օգտագործման, մասնավորապես՝ հեռախոսահամարի մուտքագրման միջոցով իր Հաշիվն կատարված փոխանցումները: Մի քանի հաշիվների առկայության դեպքում գումարը փոխանցվելու է Հաճախորդի տվյալ արժույթով հաշվարկային հաշվին, իսկ հաշվարկային հաշվի բացակայության պարագայում՝ տվյալ արժույթով դեբետային քարտին:

5.7 Հաճախորդն ընդունում է, որ Հաճախորդի և Բանկի միջև հեռախոսագրույցն անվտանգության նկատառումներից ելնելով կարող է ձայնագրվել, որն ունի ապացուցողական նշանակություն և կարող է օգտագործվել Բանկի կողմից ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի շրջանակներում:

ԳԼՈՒԽ 6. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

6.1 Հաճախորդն երաշխավորում և հավաստիացնում է, որ ունի Ծառայություններից օգտվելու լիարժեք իրավունքներ Բանկի հետ Պայմանագիր կնքելու համար, ինչպես նաև հավաստիացնում է, որ տեղեկացված է, որ Բանկի հետ Պայմանների համաձայն կնքված Դիմում-պայմանագրերը, լրացված և ներկայացված հայտերը վավեր և իրավաբանորեն պարտադիր են Հաճախորդի համար, և իրեն հայտնի չէ որևէ հանգամանք, որը կարող է հանգեցնել վերոնշյալ պայմանագրերի անվավերության: Հաճախորդն ընդունում է, որ իրեն Ծառայություններ մատուցելիս Բանկը հիմնվել է սույն կետով արված երաշխավորությունների և հավաստիացումների ճշմարտացիության վրա և պարտավորվում է Բանկին զերծ պահել դրանց խախտումներից բխող վեճերից, պահանջներից և կորուստներից: Հաճախորդը պարտավոր է Բանկի կողմից առաջարկվող Ծառայություններից օգտվել բարեխղճորեն՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան: Բանկը կարող է դադարեցնել տվյալ Ծառայության մատուցումը կամ հրաժարվել Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց, եթե Հաճախորդը չարաշահել է Ծառայությունները և/կամ դրանցից օգտվել դրանց նպատակային նշանակության բազմակի կամ Բանկի կարծիքով էական խախտումներով, ինչպես նաև Ծառայություններն օգտագործել է ոչ իրավաչափ եկամուտներ ստանալու, կամ Բանկի համար լրացուցիչ ծախսեր կամ դժվարություններ ստեղծելու միտումով:

6.2 Հաճախորդը հավաստում է, որ Բանկին տրամադրված/մուտքագրված տվյալները կարող են հիմնավորվել համապատասխան պատշաճ փաստաթղթերով, եթե այդ մասին Բանկը պահանջ ներկայացնի: Հաճախորդն ամբողջական պատասխանատվություն է կրում իր կողմից ցանկացած կերպ տրամադրած, այդ թվում՝ Համակարգում մուտքագրած տվյալների իսկության, ամբողջականության, արժանահավատության, դրանց թերի ներկայացման, ներառյալ նաև՝ կատարված տպագրական, այլ սխալների համար, ինչպես նաև անվտանգության, Համակարգերի շահագործմանն առնչվող և այլ կանոնների չպահպանման և դրանցից բխող հետևանքների համար:

6.3 Սույնով Հաճախորդը ամբողջ պատասխանատվությամբ հաստատում է, որ բոլոր ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվել են կամ կփոխանցվեն Բանկում բացված իր հաշիվներին, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր և/կամ կասկածելի գործողությունների հետ:

6.4 Սույնով Հաճախորդը հաստատում է իր կողմից տրված տեղեկությունների արժանահավատությունը և պարտավորվում ժամանակին տեղեկացնել Բանկին տրամադրված տվյալների ցանկացած փոփոխությունների մասին:

ԳԼՈՒԽ 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն Պայմաններին համաձայնություն տալը Բանկի համար չի առաջացնում Բանկային ծառայություն մատուցելու պարտավորություն:

7.2 Բանկի կողմից Համակարգում կարող է տեղադրվել Բանկի կամ վերջինիս հետ համագործակցող կազմակերպության ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և օրենսդրությամբ որպես մտավոր սեփականություն պաշտպանվող այլ օբյեկտներ: Բոլոր այդ օբյեկտները պաշտպանված են ՀՀ օրենսդրությամբ և դրանց ապօրինի օգտագործումը կարող է հանգեցնել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հետևանքների:

7.3 Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են Բանկի հայեցողությամբ՝ նշված տարբերակներից մեկով՝

- Բոլոր վեճերի լուծումը հանձնվում է «Օպտիմում Լեքս» ընկերության մշտապես գործող Արբիտրաժային դատարանին, որում գործի քննությունը իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին և Արբիտրաժային դատարանի կանոնակարգին համապատասխան: Հաճախորդը հավաստիացնում է, որ Բանկը ծանոթացրել է իրեն Արբիտրաժային դատարանում գործերի քննության ընթացակարգին և գրավոր բացահայտել է Կողմերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ բավարար տեղեկատվություն: Հաճախորդը հաստատում է, որ ստացել է արբիտրաժային վարույթի ընթացքում հաճախորդի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական ամփոփագիրը: Արբիտրաժային դատարանի կանոնակարգը տեղակայված է «Օպտիմում Լեքս» ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում՝ [www. optimuslex.am](http://www.optimuslex.am): Արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Արբիտրաժային դատարանի կանոնակարգին համապատասխան:

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

7.3.1 Տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջոցով: Հաճախորդների բողոքների քննության և կառավարման ընթացակարգը հասանելի է Կայքում: Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու

հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

7.4 Պայմաններով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են Սակագներով, առանձին Ծառայության պայմաններով, Կայքում հրապարակված տեղեկատվությունով, Բանկի և Հաճախորդի միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով և ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:

7.5 Առանձին Ծառայությունների գծով պայմանագրերով կարող են նախատեսվել պատասխանատվության այլ միջոցներ:

7.6 Բանկի և Հաճախորդի միջև պայմանագրային հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

7.7 Հաճախորդը պարտավորվում է պահպանել Պայմանագրերի գաղտնիությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.8 Պայմաններով, Դիմում-պայմանագրերով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է պայմանագրային հարաբերությունները ծագելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

7.9 Պայմանները և կից մյուս փաստաթղթերը կազմվում են հայերեն լեզվով, որոնք գերակա են այլ լեզուներով օրինակների նկատմամբ:

7.10 Հաճախորդների բողոքների, առաջարկների ներկայացմանը, բողոքների քննության և կառավարմանն առնչվող ընթացակարգերը առավել մանրամասն հասանելի են Կայքում <https://www.unibank.am/hy/iravunq/> հղումով:

7.11 «Ի՞նչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը հասանելի է ստորև հղմամբ առկա է, որը համարվում է Պայմանների ներքո Հաճախորդին տրամադրված.

[Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԲՈՂՈՔ ՈՒՆԵՔ](#)

ԳԼՈՒԽ 8. ԲՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

8.1 Սույն գլխի դրույթները կարգավորում են Հաշվի բացման, վարման, սպասարկման, և փակման կապակցությամբ Բանկի և Հաճախորդի միջև ծագող պայմանագրային հարաբերությունները:

8.2 Հաշիվների առանձին տեսակների առանձնահատկությունները և Հաշիվներով իրականացվող գործառնությունների տեսակները կարգավորվում են Պայմաններով, Սակագներով, տեղեկատվական ամփոփագրերով, ուղեցույցներով, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով:

8.3 Ի լրումն Պայմանների և Սակագների՝ Հաշվով կատարվող գործառնություններին վերաբերող և այլ պահանջները կարգավորվում են նաև Պայմանագրով, Դիմում-պայմանագրով, տեղեկատվական ամփոփագրերով, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով:

8.4 Պայմանների և դրանով նախատեսված այլ փաստաթղթերի դրույթները կիրառվում են նաև սոցիալական ապահովության, սոցիալական փաթեթի հաշիվների, էսքրո հաշիվների, նոտարի դեպոզիտ հաշիվների, կառուցապատողի հատուկ հաշիվների, պատվովճարի հատուկ հաշիվների, Զինծառայողների վնասների հատուցման հաշիվների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հատուկ բանկային հաշիվների նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ հատուկ բանկային հաշիվների առանձնահատկությունները կարգավորող օրենսդրությամբ:

8.5 Բանկը Հաճախորդի համար բացում է Հաշիվ՝ Բանկի սահմանած ձևանմուշով Հաճախորդի՝ առձեռն կամ Բանկի համար ընդունելի այլ եղանակով Բանկ ներկայացրած Դիմում-պայմանագրի և/կամ Դիմումի հիման վրա:

8.6 Հաշիվների բացումը կատարվում է՝ համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի դրույթների:

8.7 Հաշիվը բացվում է տվյալ հաշվի նպատակային նշանակությանը համապատասխան:

8.8 Սույնով Հաճախորդը տալիս է իր գրավոր համաձայնությունն և հանձնարարում է Բանկին, Բանկի հայեցողությամբ, ելնելով Հաճախորդի շահերից, իրականացնել ներքոնշյալ գործողություններն՝ առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարականի, եթե վերջինիս կողմից այլ գրավոր հանձնարարական, դիմում, հայտ չի ներկայացվել Բանկ:

8.9 Հաճախորդի Հաշվին մուտքագրման ենթակա գումարի արժույթին համապատասխան արժույթով Հաճախորդի Հաշիվ չունենալու դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդի համար բացել մուտքագրվող միջոցների արժույթով Հաշիվ և գումարը մուտքագրել նոր բացված Հաշվին:

8.10 Հաճախորդի հետ ավանդի պայմանագիր կնքելիս Բանկն իրավունք ունի Հաճախորդի համար բացել տվյալ պայմանագրի սպասարկման ապահովման, այդ թվում՝ միջոցների մուտքագրման և ելքագրման համար անհրաժեշտ ՀՀ դրամային և/կամ ավանդի պայմանագրի արժույթին համապատասխանող արժույթով Հաշիվ:

8.11 Բանկը կարող է որոշակի գործառնությունների համար իր հայեցողությամբ ընտրել և օգտագործել Հաճախորդի համապատասխան Հաշիվը: Միևնույն արժույթով մեկից ավելի Հաշիվների առկայության դեպքում Հաճախորդը կարող է տեղեկացնել Բանկին այն Հաշվի մասին, որն օգտագործվելու է համապատասխան գործառնության (օրինակ՝ ավանդի տոկոսների վճարման) համար, եթե դա հնարավոր է տվյալ գործառնության համար սահմանված իրավական ակտով, Բանկի ներքին ընթացակարգերով:

8.12 Բանկն իրականացնում է Հաշվի համալիր սպասարկումը և Հաճախորդի հանձնարարությամբ այն բոլոր հաշվարկային և դրամարկղային գործառնությունները, որոնք ՀՀ իրավական ակտերով արգելված չեն ֆիզիկական անձանց, իրավաբանական անձանց և

անհատ ձեռնարկատերերի համար:

8.13 Բանկը հաճախորդի Հաշիվների վարումն իրականացնում է, եթե Հաշվի վարման ընթացքում բացակայում են Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված կամ ՀՀ օրենսդրությամբ գործող այլ սահմանափակումները:

8.14 Հաշվով հաշվարկային և դրամարկղային գործառնություններն իրականացվում են հաշվի մնացորդի սահմաններում՝ հաշվի առնելով Սակագներով սահմանված միջնորդավճարների գումարները և պահպանելով չնվազող մնացորդի (սահմանված լինելու դեպքում) սահմանաչափը:

8.15 Բանկը վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցումները, վճարման հանձնարարականների ակցեպտավորումը և կատարումն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝ ՀՀ ԿԲ «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցումների կատարման առավելագույն ժամկետներ սահմանելու կարգին» և Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան:

8.16 Հաճախորդի Հաշվում դրամական միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս են գրվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաջորդականությամբ: Եթե Հաճախորդի Հաշվին արգելանք դրված չէ, առաջնահերթության իրավունքով Բանկը գանձում է իր նկատմամբ Հաճախորդի չմարված ժամկետանց պարտավորությունների գումարները:

8.17 Հաճախորդի հաշվին միջոցների մուտքագրումն իրականացվում է համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի:

8.18 Հաճախորդի հանձնարարականներով արտարժույթի առուվաճառքի գործառնություններն իրականացվում են Բանկի կողմից սահմանված փոխարժեքներով և կարգով:

8.19 Հաշվին/Հաշիվներին առկա դրամական միջոցների դրական մնացորդի նկատմամբ Բանկի կողմից կարող է հաշվարկվել Սակագներով և/կամ Պայմանագրերով սահմանված տարեկան տոկոսադրույք, որի հիման վրա հաշվարկված գումարները մուտքագրվում են Հաշվին՝ յուրաքանչյուր ամիս, եթե այլ բան նախատեսված չէ տեղեկատվական ամփոփագրերով և/կամ Սակագներով և/կամ Պայմանագրերով:

8.20 Հաճախորդը կարող է հաշիվներով կատարել կանխիկ դրամական միջոցների մուտքագրման և ելքագրման գործառնություններ՝ սահմանված Տեղեկատվական ամփոփագրերին և/կամ Սակագներին համապատասխան Բանկի կողմից Պայմանագրով և/կամ ՀՀ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով:

8.21 Բանկն իրավունք ունի.

8.21.1 կատարել կամ մերժել Հաշվով գործարքի կատարումը (այդ թվում՝ մերժել Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելը)՝ ի կատարումն փողերի լվացման և ահաբեկչության (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ միջազգային կամ ՀՀ նորմատիվ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների՝

8.21.2 Հաճախորդից պահանջել ներկայացնելու բոլոր անհրաժեշտ տեղեկությունները Հաշվով կատարվող գործարքների վերաբերյալ, իսկ վերջիններս չտրամադրելու դեպքում՝ մերժել գործարքի կատարումը: Նշված տեղեկությունների ճշտումը կատարվում է Բանկի կողմից տրամադրված համապատասխան փաստաթուղթը, Հաճախորդի կողմից պատշաճ կարգով լրացնելու կամ Հաճախորդներից հավելյալ փաստաթուղթ /պայմանագիր, հավաստագիր, հաշիվ-ապրանքագիր և այլն/ պահանջելու և առձեռն կամ Բանկի հետ համաձայնեցված այլ եղանակով Բանկ ներկայացնելու միջոցով:

8.21.3 ՀՀ, օտարերկրյա և միջազգային օրենսդրություններով սահմանված դեպքերում և կարգով Բանկի կողմից Հաճախորդի մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն երրորդ անձանց հրապարակելու վերաբերյալ համաձայնության դեպքում՝ Հաճախորդին սպասարկել միայն հաշվի առնելով Բանկի կողմից Հաճախորդի գործարար բնութագրի, գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի տեղեկությունների

բացահայտման, և Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) (OFAC), Եվրամիության (ԵՄ), ՀՀ կենտրոնական բանկի կամ Բանկի հատուկ ցանկերում ՓԼ/ԱՖ, Միջազգային պատժամիջոցների գծով բացասական տեղեկությունների բացակայության հաստատման պարագայում:

ա) Ֆիզիկական անձանց դեպքում սպասարկման համար հիմք կարող է հանդիսանալ միջազգային պատժամիջոցների տակ գտնվող երկրի կամ տարածքի քաղաքացի կամ ռեզիդենտ չլինելու, նշված երկրներում կամ տարածքներում կենսական և/կամ տնտեսական շահերի բացակայությամբ պայմանավորված Բանկի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում Հաճախորդին ռիսկային չդասակարգելը/չհամարելը և/կամ հաճախորդի սպասարկումը ոչ նպատակահարմար չհամարելը:

բ) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում սպասարկման համար հիմք կարող է հանդիսանալ միջազգային պատժամիջոցների տակ գտնվող երկրում կամ տարածքում գրանցված չլինելը, գործունեության կամ գործարար կապերի (այդ թվում կոնտրագենտների), մասնակիցների (իրական շահառուների) ուղղակի կամ անուղղակի կապի բացակայությունը նշված երկրի կամ տարածքի հետ և/կամ Բանկի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում հաճախորդին ռիսկային չդասակարգելը/չհամարելը և/կամ հաճախորդի սպասարկումը ոչ նպատակահարմար չհամարելը:

8.21.4 ՓԼ/ԱՖ, միջազգային պատժամիջոցների կիրառմամբ և/կամ ֆորսմաժորային իրավիճակներում (այդ թվում ՀՀ տարածքից դուրս) արտարժույթի շուկայում դրսևորվող փոխարժեքի կտրուկ տատանումներով (որևէ օրվա/օրերի ընթացքում փոխարժեքի փոփոխության 5 տոկոս և ավել կուտակային աճի/նվազման դեպք/եր/ում) պայմանավորված և դրանցից բխող ռիսկերը կանխարգելելու նպատակով՝ սահմանել հաճախորդների կողմից արտարժույթով կատարվող գործարքների իրականացման սահմանաչափերն ու վճարման կարգը, այդ թվում՝ ժամանակավորապես սահմանափակել, և/կամ մասնակի բավարարել՝ ելքագրման, փոխանցման, արտարժույթի փոխարկման գործարքները՝ հիմք ընդունելով գործարքի իրականացման պահին Բանկի ներքին իրավական ակտերով և Բանկի պաշտոնական էլեկտրոնային կայքում հրապարկված սպասարկման հատուկ ընթացակարգերը, պայմանագրային սակագները և գործարքային գների օրական գնանշումները:

8.21.5 Բանկի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում (այդ թվում՝ միջազգային պատժամիջոցների մասով) կասկածելի կամ բարձր ռիսկային գործարքների իրականացումը կանխելու նպատակով հրաժարվել իրականացնել հաշիվ/ների սպասարկումը, Հաճախորդի հաշվարկադրամարկղային փաստաթղթերում կասկածներ հայտնաբերելու դեպքում անմիջապես կասեցնել գործառնության կատարումը՝ այդ մասին տեղեկացնելով Հաճախորդին, եթե Հաշվով կատարվող գործարքը գերազանցում է Բանկի կողմից սահմանված սահմանաչափը:

8.21.6 Չբացել Հաշիվ և/կամ դադարեցնել Հաշվով իրականացվող բանկային գործառնությունները, եթե Հաճախորդը ողջամիտ ժամկետում Բանկ չի ներկայացնում Պայմանագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը կամ Հաճախորդի բացատրություններն ու ներկայացված փաստաթղթերը Բանկի կողմից գնահատվում են անբավարար, կասկածելի և/կամ ոչ նպատակային, ինչպես նաև Պայմաններով, Տեղեկատվական ամփոփագրերով և/կամ Սակագներով, առանձին ծառայության պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

8.21.7 հաշվանցել Բանկի և Հաճախորդի հանդիպական պահանջները,

8.21.8 Հաշվից /ներառյալ Բանկում ունեցած այլ հաշիվներից, այդ թվում՝ արտարժույթային/ գանձել Սակագներով նախատեսված միջնորդավճարները, Հաճախորդի հանձնարարականների կատարման հետ կապված Բանկի կրած ծախսերի գումարները /որոնք Հաճախորդը սույնով պարտավորվում է փոխհատուցել Բանկին/, ինչպես նաև Բանկի հանդեպ Հաճախորդի ունեցած այլ պարտավորությունների գծով գումարները: Ընդ որում,

Բանկի դրամական պահանջները և գործարքների համար գանձումները առաջնահերթ գանձվում են գործարքի առարկա կամ ՀՀ դրամով հաշվ/ներ/ից, իսկ վերջին/ներ/իս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի արտարժույթային հաշվ/ներ/ից, որի արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին Բանկում գործող տվյալ արտարժույթի առքի փոխարժեքով, եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան սահմանված չէ: Սույն ենթակետը Հաճախորդի հետ պայմանագրային հարաբերությունների գործողության ողջ ժամկետում հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 922 հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Հաճախորդի կողմից Բանկին տրված կարգադրություն:

8.21.9 Լուծել Դիմում-պայմանագիրը և դադարեցնել հաշվի սպասարկումը՝ պահանջելով վճարել տվյալ պահին վճարման ենթակա բոլոր գումարները, այդ թվում՝ Վճարային սահմանաչափը գերաձախսած գումարները:

8.22 Բանկն իրավունք ունի սահմանափակել հաշվի տնօրինումը հետևյալ դեպքերում

8.22.1 Հաճախորդի դիմումի կամ հանձնարարականի հիման վրա,

8.22.2 եթե Հաճախորդի պարտավորության կատարման ապահովման միջոց է հանդիսանում Հաշվի դրամական միջոցների գրավը,

8.22.3 եթե Հաճախորդը Բանկի նկատմամբ ունի չկատարված պարտավորություններ, այդ թվում՝ երրորդ անձանց տրված երաշխավորության ուժով,

8.22.4 եթե Բանկի պահանջով Հաճախորդը սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող փաստաթղթեր և տեղեկատվություն,

8.22.5 եթե Հաճախորդի գործունեությունը կամ նրա կողմից կատարված որևէ գործառնություն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից դիտարկվել է որպես կասկածելի լինելու չափանիշներին համապատասխանող և դրա համար պահանջվող հիմնավոր փաստաթղթերը և/կամ փաստարկները չեն ներկայացվել նշված ժամկետներում,

8.22.6 եթե Հաճախորդի գործունեությունը դիտարկվել է կասկածելի,

8.22.7 եթե Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, հարկային մարմինների և/կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ արգելանք է դրվել Հաճախորդի հաշիվների վրա,

8.22.8 Հաճախորդի հետ կնքված այլ պայմանագր/եր/ով սահմանված դեպքերում,

8.22.9 ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

8.23 Բանկն իրավունք ունի Հաշվից/հաշիվներից անակցեպտ կարգով գանձումներ կատարել հետևյալ դեպքերում

8.23.1 Հաճախորդի հանձնարարականի դիմումի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝

8.23.2 Բանկի նկատմամբ առկա պարտավորությունների գումարի չափով,

8.23.3 Բանկի հետ կնքված այլ պայմանագրերով/համաձայնագրերով սահմանված այլ դեպքերում:

8.24 Հաշվով գործառնությունները դադարեցնելու կամ սահմանափակելու դեպքերում Պայմանագիրը լուծելու և հաշիվը փակելու վերաբերյալ Հաճախորդի դիմումը Բանկի կողմից ենթակա չէ բավարարման, քանի դեռ չեն վերացել հաշվով գործառնությունների դադարեցման համար հիմք ծառայած հանգամանքները:

8.25 Հաճախորդի՝ Բանկում ունեցած Հաշիվներին առկա միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվում առկա միջոցների նկատմամբ սահմանափակում կիրառվելու (արգելադրվելու), հաշվով գործառնությունները դադարեցվելու դեպքում, ինչպես նաև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ և/կամ Պայմաններով նախատեսված այլ դեպքերում: Նշված տեղեկությունների ճշտումը

կատարվում է Բանկի կողմից տրամադրված համապատասխան փաստաթուղթը Հաճախորդի կողմից պատշաճ կարգով լրացնելու կամ Հաճախորդներից հավելյալ փաստաթուղթ (պայմանագիր, հավաստագիր, հաշիվ-ապրանքագիր և այլն) պահանջելու և առձեռն կամ Բանկի հետ համաձայնեցված այլ եղանակով Բանկ ներկայացնելու միջոցով:

8.26 Հաճախորդի հաշվարկադրամարկղային փաստաթղթերում կասկածներ հայտնաբերելու դեպքում Բանկն իրավունք ունի անմիջապես կասեցնել գործառնության կատարումը՝ այդ մասին տեղեկացնելով Հաճախորդին, եթե Հաշվով կատարվող գործարքը գերազանցում է Բանկի կողմից սահմանված սահմանաչափը:

8.27 Բանկը պարտավոր է ապահովել Հաճախորդի կողմից հաշվով իրականացվող գործառնությունների (այդ թվում՝ իր ցանկացած հաշվով), ցանկացած հաշիվների մնացորդի, ինչպես նաև Հաճախորդին սպասարկման կապակցությամբ Հաճախորդի վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը:

8.28 Բանկը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ նաժատեսված պարբերականությամբ և Հաճախորդի նախընտրած եղանակով Հաճախորդի համար հասանելի դարձնել Հաշվի քաղվածքը՝ բացառությամբ այն դեպքերի, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել: Ընդ որում, Բանկի՝ սույն կետում նշված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

8.29 Հաճախորդը պարտավոր է Հաշիվն օգտագործել տվյալ հաշվի նպատակային նշանակությանը համապատասխան:

8.30 Հաճախորդը պարտավոր է Բանկին վճարել Տեղեկատվական ամփոփագրերով և/կամ Սակագներով, Պայմանագրով և/կամ Դիմում-պայմանագրով սահմանված վճարները, այդ թվում՝ տուժանքները՝ քարտային հաշվին գերաձխսի գոյացման դեպքում: Ինչպես նաև, Հաճախորդը պարտավոր է Հաշվի քաղվածքի ձևավորման պահից 15 /տասնհինգ/ օրվա ընթացքում մարել Վճարային սահմանաչափը գերաձխսած գումարները, միջնորդավճարները և դրանց դիմաց հաշվարկված տոկոսներն ու տույժերը:

8.31 Հաճախորդի կողմից Հաշվի մնացորդի ճշտությունը կարող է վիճարկվել Հաշվից քաղվածքը ստանալու օրվանից 10 օրացուցային օրվա ընթացքում, որի դեպքում Բանկը Հաճախորդի հետ միասին կատարում է փոխադարձ հաշվարկ և Բանկի մեղքով տեղի ունեցած անճշտության հայտնաբերման դեպքում 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում կատարում ուղղում:

8.32 Բանկը Հաճախորդի հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ ունի առաջնահերթ բավարարում ստանալու իրավունք՝ որպես Բանկի հանդեպ Հաճախորդի ստանձնած/ստանձնելիք բոլոր պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման միջոց:

8.33 Բանկի կողմից Հաճախորդների համար բացվող Խնայողական հաշիվների համար սահմանվում են հետևյալ սահմանափակումները՝ Խնայողական հաշվով կարող են իրականացվել բացառապես հետևյալ գործառնությունները.

8.33.1 Կանխիկի մուտքագրում,

8.33.2 Փոխանցում սեփական հաշիվների միջև,

8.33.3 Արտարժույթի փոխանակում սեփական հաշիվների միջև,

8.33.4 Ժամկետային ավանդի ներգրավում,

8.33.5 Վարկային պարտավորությունների կատարում, այդ թվում՝ անակցեպտ գանձման կարգով,

8.33.6 Հաճախորդի պարտավորությունների կատարման նպատակով անակցեպտ գանձումներ:

8.34 ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հատուկ հաշիվներով, այդ թվում՝ էսքրո հաշիվներով, կառուցապատողի հատուկ հաշիվներով և այլ հաշիվներով սահմանափակումները և առանձնահատկությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և Հաճախորդի հետ

կնքվող համապատասխան պայմանագրերով:

ԳԼՈՒԽ 9. ԲԱՆԿԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

9.1 Սույն գլխի դրույթները կարգավորում են Քարտերի տրամադրման, օգտագործման, փակման կապակցությամբ Բանկի և Հաճախորդի միջև ծագող պայմանագրային հարաբերությունները: Ի լրումն Պայմանների և Սակագների՝ Քարտերի առանձին տեսակները, վերջիններիս առանձնահատկություններն ու ընձեռած հնարավորությունները, քարտային գործառնությունների անվտանգությանը վերաբերող և այլ պահանջները կարգավորվում են նաև Պայմաններով, Պայմանագրով, Դիմում-պայմանագրով, Տեղեկատվական ամփոփագրերով, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով: Սույն գլխով չկարգավորվող դրույթները կարգավորվում են Պայմաններով, այդ թվում՝ Հաշիվների վերաբերյալ Պայմանների դրույթներով, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխով:

9.2 Քարտը տրամադրվում է Հաճախորդին վերջինիս կողմից Քարտի դիմումի ներկայացման օրվանից մինչև 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում՝ Դիմումը, Պայմանագիրը, կամ Դիմում-պայմանագիրը և ստացականը ստորագրելուց, ինչպես նաև ամսական/տարեկան սպասարկման վճարը վճարելուց հետո:

9.3 Հաճախորդը պարտավորվում է Քարտը պատվիրելիս վճարել կամ քարտային հաշվին մուտքագրել տվյալ պահին Սակագներով սահմանված միջնորդավճարը:

9.4 Քարտերի որոշ տեսակների համար կարող են սահմանվել քարտով գործառնությունների կատարման որոշակի սահմանափակումներ, որոնք արտացոլված են տվյալ ծառայության Տեղեկատվական ամփոփագրում և/կամ սահմանված են Սակագներով:

9.5 Բանկն իրավունք ունի Քարտի գործողության ընթացքում Հաճախորդի քարտային հաշվից անվիճելի/անակցեպտ կարգով գանձել Քարտի տրամադրման և քարտային հաշվի սպասարկման համար միջնորդավճարները:

9.6 Միջնորդավճարները գանձվում են կանխավճարի կարգով՝ Տեղեկատվական ամփոփագրում և/կամ Դիմում-պայմանագրում սահմանված պարբերականությամբ՝ առաջին անգամ՝ մինչև Քարտի տրամադրումը, իսկ Քարտի գործողության հաջորդող ամիսների/տարիների համար՝ Քարտի գործողության յուրաքանչյուր ժամկետի սկզբից՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում: Հաճախորդի քարտային հաշվին բավարար միջոցների բացակայության դեպքում սույն կետում նշված գումարները, ինչպես նաև Վճարային սահմանաչափը գերաձախսը և դրա համար հաշվարկված տուժանքի գումարները գանձվում են Հաճախորդի՝ Բանկում բացված այլ հաշիվներից, որի ապահովման համար Հաճախորդը սույնով տալիս է իր անվերապահ համաձայնությունը: Եթե սույն կետում նշված գումարները մարելու համար չեն բավարարում նաև Հաճախորդի՝ Բանկում բացված այլ հաշիվներին առկա միջոցները, ապա Բանկն իրավունք ունի 30 օր և ավելի ժամկետանց պարտավորության առկայության դեպքում վաղաժամկետ դադարեցնել Քարտի գործողությունը, ճանաչել այն անվավեր և պահանջել Հաճախորդից Քարտը վերադարձնել Բանկ, ինչպես նաև վճարել սույն կետում նշված գումարները:

9.7 Քարտը ժամկետից շուտ Բանկ վերադարձնելու, Քարտը ոչնչացնելու և/կամ Քարտի փակման դիմում Բանկ ներկայացնելու դեպքում Հաճախորդի կողմից վճարված միջնորդավճարները, որոնք սահմանված են Տեղեկատվական ամփոփագրերով և Սակագներով, ենթակա չեն վերադարձման:

9.8 Հաճախորդի կողմից Քարտը երկամսյա ժամկետում Բանկից չստանալու դեպքում Բանկն իրավասու է ոչնչացնել Քարտը և PIN ծածկագրով ծրարը՝ լուծելով պայմանագիրը:

9.9 Բանկն իրավասու է նաև վաղաժամկետ լուծել պայմանագիրը, փակել Հաճախորդի քարտային հաշիվը՝ պահանջելով վճարել Վճարային սահմանաչափը գերաձախսած գումարները, ինչպես նաև մինչև վճարման օրը հաշվարկված տուժանքի գումարները, եթե Հաճախորդը թույլ է տվել Սակագներով սահմանված միջնորդավճարների և/կամ Վճարային սահմանաչափը գերաձախսած գումարների վճարման կետանց, նաև բանկային

ծառայությունների տրամադրման պայմաններով, Դիմում-պայմանագրով և Կանոններով սահմանված պայմանների խախտում, ինչպես նաև Պայմաններով սահմանված այլ հիմքերի առկայության դեպքում:

9.10 Բանկը պարտավոր է քարտապանի համար ապահովել Քարտով կանխիկ միջոցների ստացումը և վճարումների իրականացումը քարտային հաշվին առկա գումարների և վարկային գծի/օվերդրաֆտի/ համաձայն կնքվող համապատասխան պայմանագրի սահմաններում:

9.11 Բանկը պարտավոր է համապատասխան վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված կանոններով և ժամկետներում բողոքարկել Հաճախորդի կողմից բողոքարկվող գործառնությունները/գործարքները և դրական արդյունքների դեպքում բողոքարկման գործընթացի ավարտից հետո գումարները վերականգնել Հաճախորդի հաշվին:

9.12 Հաճախորդը պարտավորվում է բողոքարկման գործընթացի բացասական արդյունքների դեպքում մեկամսյա ժամկետում Բանկին վճարել Տեղեկատվական ամփոփագրերով և/կամ Սակագներով և/կամ Դիմում-պայմանագրով սահմանված վճարները, ինչպես նաև բողոքարկվող գործառնության/գործարքի կատարման արդյունքում առաջացած գերաժախսերը:

9.13 Հաճախորդն իրավունք ունի օգտվել Դիմում-պայմանագրով և Կանոններով քարտապանին վերապահված այլ իրավունքներից:

9.14 Հաճախորդն իրավունք ունի Քարտը ապաբլոկավորելու, իսկ քարտային հաշիվը ապաստոցելու նպատակով դիմում ներկայացնել Բանկ անձամբ ներկայանալ Բանկ կամ զանգահարել Բանկ՝ Պայմաններում նշված հեռախոսահամարներով՝ հայտնելով իր Քարտի դիմումում /դիմում-պայմանագրում/ նշված գաղտնաբառը (խոսքը PIN-ծածկագրի մասին չէ) և/կամ Բանկի պահանջով այլ նույնականացման տվյալներ:

9.15 Հաճախորդն իրավունք ունի՝ Բանկի կողմից Պայմանների միակողմանի փոփոխման այնպիսի դեպքերում, երբ փոփոխության արդյունքում վատթարանում են Քարտի օգտագործման պայմանները, միակողմանիորեն լուծել Դիմում-պայմանագիրը՝ Բանկին վերադարձնելով Քարտը՝ վճարելով մինչև դիմում- պայմանագրի լուծման պահը Սակագներով սահմանված բոլոր վճարները, այդ թվում՝ գերաժախսի գումարները /առկայության դեպքում/:

9.16 Գործառնություններ իրականացնելիս տվյալ արժույթից տարբերվող արժույթով Բանկն իրականացնում է արժույթների փոխարկում Բանկի կողմից սահմանված փոխարժեքով: Արտարժույթային գործառնություններ իրականացնելիս արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով ծագող հնարավոր անբարենպաստ հետևանքների ռիսկը կրում է Քարտապանը:

9.17 Բանկը Քարտապանի քարտային հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ ունի առաջնահերթ բավարարում ստանալու իրավունք՝ որպես Բանկի հանդեպ Քարտապանի ստանձնած/ստանձնելիք բոլոր պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման միջոց:

9.18 Քարտերի օգտագործման և սպասարկման վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Բանկային քարտերի սպասարկման և օգտագործման պայմաններում ու կանոններում, որոնք տեղադրված են բանկի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղումով՝ <https://www.unibank.am/hy/service/cards/>

ԳԼՈՒԽ 10. ԱՎԱՆԴՆԵՐ

10.1 Սույն գլխի դրույթները կարգավորում են Ավանդների ներգրավման կապակցությամբ Բանկի և Հաճախորդի միջև ծագող պայմանագրային հարաբերությունները: Սույն Պայմանների հետ մեկտեղ Ավանդի պայմանագրի անբաժանելի մասն են կազմում նաև Սակագները, Տեղեկատվական ամփոփագրերը, ինչպես նաև տվյալ տեսակի ավանդի հատուկ պայմանները սահմանող, Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը:

10.2 Ավանդն ընդունելիս այն մուտքագրվում է այդ նպատակով բացված Ավանդային հաշվին, որը վարվում է այլ բանկային հաշիվներից առանձին և դրա նկատմամբ տարածվում են

Հաշիվների վերաբերյալ Պայմանների դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն բաժնով:

10.3 Բանկը Հաճախորդին ավանդի դիմաց տոկոսներ է վճարում պայմանագրերով, Տեղեկատվական ամփոփագրերով և/կամ Սակագներով և տվյալ ավանդի պայմաններով նախատեսված կարգով և չափով: Տեղեկատվական ամփոփագրերով և/կամ Սակագներով սահմանված տոկոսը վճարվում է պայմանագրում նշված արժույթով:

10.4 Համալրման հնարավորությամբ Ավանդային հաշվին Հաճախորդի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա Ավանդային հաշվի համարի նշումով, եթե այլ բան սահմանված չէ Բանկի ներքին իրավական ակտերով:

10.5 Ավանդի գումարի նկատմամբ տոկոսները հաշվարկվում են Ավանդային հաշվի փաստացի մնացորդի նկատմամբ Ավանդը Հաճախորդի ավանդային հաշվին մուտք լինելու (Ավանդի գումարը համարելու) օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը: Կուտակված տոկոսները հաշվեգրվում են ավանդային հաշվի մնացորդին տարեկան պարբերականությամբ, եթե տվյալ ավանդատեսակի համար այլ պայման նախատեսված չէ: Հաշվարկներում օգտագործվող տարվա օրերի քանակը ընդունվում է օրացուցային, իսկ որպես բաժանարար՝ 365 (նահանջ տարվա դեպքում բաժանարարը հավասարեցվում է 366-ի):

10.6 Ավանդի պայմանագրով որոշված այն ավանդի համար տոկոսների չափը, որը ֆիզիկական անձ Հաճախորդը ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ Ավանդի պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Օրենքով չարգելված դեպքերում Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել ցպահանջ ավանդի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը՝ այդ մասին համաձայնեցված եղանակով ծանուցելով Հաճախորդին: Տոկոսադրույքի փոփոխության հետ համաձայն չլինելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի նախքան փոփոխված տոկոսադրույքի ուժի մեջ մտնելը պահանջել վերադարձնել ավանդը և վճարել վերադարձման պահի դրությամբ ավանդի դիմաց սահմանված չափով հաշվարկված տոկոսները:

10.7 Բանկն իրավունք ունի.

10.7.1 Ինքնուրույնաբար օգտագործել Ավանդի գումարը:

10.7.2 Ավանդատուին տեղեկացնել ի կատարումն ընդունված և մերժված էլեկտրոնային փաստաթղթերի մասին՝ նշելով մերժման պատճառը:

10.7.3 Ավանդի պայմանագրի դադարման դեպքում (սահմանված ժամկետի ավարտ կամ Դիմում-պայմանագրի լուծում) Ավանդի գումարը փոխանցել Ավանդատուի հաշվարկային հաշվին, իսկ տվյալ ավանդի արժույթով Հաշվի բացակայության պարագայում՝ ցպահանջ հաշվին, եթե պայմանագրով կամ Ավանդատուի կողմից այլ հանձնարարական ներկայացված չէ:

10.7.4 Ավանդին հաշվեգրված տոկոսը Հաճախորդին վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ֆիզիկական անձ Հաճախորդի հարկային գործակալ՝ օրենքով սահմանված չափով և կարգով գանձելով և պետական բյուջե փոխանցելով սահմանված հարկերը: Ավանդների տոկոսագումարներն ենթակա են հարկման 10%-ի չափով: Բանկը պարտավոր չէ ավանդի գումարը ժամկետից շուտ պահանջելու և նման այլ դեպքերում ետ ստանալ Հաճախորդից ավել գանձված հարկերի գումարը կամ այն վերադարձնել Հաճախորդին:

10.8 Ֆիզիկական անձ Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Ավանդի պայմանագիրը (ավանդը կամ դրա մի մասը Ավանդի պայմանագրում սահմանված ժամկետից շուտ պահանջել): Ավանդի պայմանագրի վաղաժամկետ դադարման (լրիվ կամ մասնակի) դեպքում Բանկը Սակագներով կամ Տեղեկատվական ամփոփագրով սահմանված կարգով կարող է Հաճախորդից գանձել տուգանք, հաշվի բացման և/կամ դրամական միջոցների կանխիկացման և/կամ հաշվին կանխիկ մուտքագրման վճարներ, իրականացնել տոկոսների վերահաշվարկ, ինչը կարող է հանգեցնել տարեկան տոկոսային եկամտաբերության նվազման:

Ընդ որում, եթե Հաճախորդին փաստացի վճարված տոկոսը գերազանցում է նման վերահաշվարկի արդյունքում ստացման ենթակա տոկոսը, ապա Բանկը կարող է գումարի տարբերությունը նվազեցնել Ավանդի գումարից:

10.8.1 Սույն Պայմանների 11.8 կետով նախատեսված Հաճախորդի իրավունքները չեն տարածվում Իրավաբանական անձ հաճախորդների հետ կնքվող ավանդային պայմանագրերի վրա:

10.9 Ավանդի պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել ՀՀ օրենսդրության համաձայն իրավասու մարմինների պահանջով ավանդի գումարի վրա բռնագանձում տարածելու կամ այլ կերպ ավանդի գումարն Ավանդային հաշվից ելքագրելու Բանկի համար պարտադիր պահանջ ստացվելու դեպքերում:

10.10 Արտարժույթով ներգրավված ավանդի վճարումները, Ավանդատուին ՀՀ դրամով իրականացվելիս փոխարկումը կատարվում է՝ կիրառելով վճարման օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված համապատասխան արժույթի փոխարժեքը:

10.11 Եթե Ավանդը ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն հավաստում է, որ պայմանագիրը կնքելու պահին գիտակցել և ընդունել է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով հնարավոր ռիսկերը:

10.12 Ավանդատուն հանձնարարում է Բանկին ցանկացած ժամանակ Ավանդի գումարը հետ պահանջելու դեպքում Ավանդի գումարն առաջնահերթության կարգով ուղղել ժամկետանց կամ վճարման ենթակա վարկային պարտավորությունների մարմանը, եթե այդպիսիք առկա են:

10.13 Ավանդատուն իրավունք ունի Բանկից պահանջել վերադարձնել Ավանդի գումարը և վճարել տոկոսներ՝ Պայմանագրով սահմանված չափերով և կարգով:

10.14 Ավանդատուն իրավունք ունի Ավանդի պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով Ավանդի գումարից ելքագրումներ կատարել:

10.15 Ավանդը և/կամ դրա նկատմամբ հաշվեգրված տոկոսները ստանալիս ավանդատուն պետք է Բանկ ներկայանա անձը հաստատող փաստաթղթով:

10.16 Ավանդի վերադարձն ապահովված է Բանկին սեփականության իրավունքով պատկանող գույքով, ինչպես նաև Ավանդների հատուցումն երաշխավորող հիմնադրամի կողմից՝ Երաշխավորման մասին օրենքով սահմանված դեպքերում, չափով և կարգով:

10.17 Ավանդի ժամկետի երկարաձգման դեպքում երկարաձգված ժամկետի համար գործում են երկարաձգման պահի դրությամբ Բանկում տվյալ ավանդատեսակի համար հրապարակված պայմանները, իսկ Պայմանագրի պայմանները շարունակում են գործել այնքանով, որքանով չեն հակասում այդ պահին տվյալ ավանդատեսակի համար հրապարակված Տեղեկատվական ամփոփագրով սահմանված կամ կայքում հրապարակված պայմաններին:

10.18 Եթե Պայմանագրով որպես Ավանդատու հանդես են գալիս մեկից ավելի անձինք, Ավանդի և տոկոսագումարների վճարումները Բանկի կողմից կատարվում են բոլոր Ավանդատուներին՝ համամասնությամբ՝ ստորագրություն վերցնելով: Ավանդատուներից մեկի կողմից գումարները ստանալու դեպքում վերջինս Բանկին պետք է ներկայացնի մյուս Ավանդատուների կողմից տրված լիազորագիր՝ վավերացված նոտարական կարգով:

10.19 Իրավաբանական անձինք իրավունք չունեն այլ անձանց փոխանցել իրենց ժամկետային ավանդներում եղած դրամական միջոցները: Ավանդատուի կողմից նման տարբերակ ընտրելու դեպքում ժամկետային ավանդային հաշվի միջոցները փոխանցվում են ավանդատուի հաշվարկային հաշվին, որից էլ կատարվում է փոխանցումն երրորդ անձանց:

ԳԼՈՒԽ 11. ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11.1 Բանկը Հաճախորդներին դրամարկղային ծառայությունները մատուցում է սույն պայմաններով, Բանկի ներքին իրավական ակտերով և Սակագներով սահմանված դրույթներին համապատասխան:

11.2 Բանկի կողմից մատուցվող դրամարկղային ծառայություններից օգտվելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի անմիջապես տեղում ստուգել գործարքի արդյունքում ձևավորվող

վճարային փաստաթուղթը և իրականացնել կանխիկ դրամական միջոցների հաշվարկ, և անճշտությունների հայտնաբերման դեպքում հայտնել Բանկին այդ մասին: Սույն կետով սահմանված իրավունքից չօգտվելու կամ, հետագայում գործարքը բողոքարկվելու դեպքում, Բանկի տեսաձայնագրման համակարգի միջոցով կատարված ձայնագրություններով անճշտության պատճառները չպարզվելու դեպքում, անճշտությունների բացասական հետևանքները կրում է հաճախորդը: Սույն կետի իմաստով անճշտություն է համարվում կանխիկով գործառնություն իրականացնելու արդյունքում ձևավորված ավելցուկը, պակասորդը, անվճարունակ կամ կեղծ թղթադրամների, մետաղադրամների հայտնաբերումը, վճարային փաստաթղթերում առկա սխալները:

11.3 Բանկը կանխիկ վճարվող դրամական միջոցների մասով իրականացնում է թվաբանական կլորացում հետևյալ կարգով. 5 (հինգ) ՀՀ դրամից մեծ կամ հավասար գումարները կլորացվում են դեպի վերև՝ առաջին տասնորդական, իսկ 5 (հինգ) ՀՀ դրամից փոքր գումարները կլորացվում դեպի ներքև՝ առաջին տասնորդական:

ԳԼՈՒԽ 12. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԿՈՒՄ

- 12.1** Բանկում արտարժույթի փոխարկումը կատարվում է կանխիկ և անկանխիկ եղանակներով՝ Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում;
- 12.2** Բանկի հաճախորդները կարող են իրականացնել անկանխիկ արտարժույթային փոխարկումներ իրենց ՀՀ դրամով կամ արտարժույթով բանկային հաշիվներից նաև բանկային ծառայությունների հեռահար սպասարկման համակարգով:
- 12.3** Բանկում արտարժույթի փոխարկումն իրականացվում է գործարքի կատարման պահին Բանկում գործող փոխարժեքով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 12.4** Բանկն իր պաշտոնական կայքում հրապարակում է Բանկի կողմից փոխարկման համար ընդունելի արտարժույթի տեսակները, դրանց փոխարժեքները և ծավալները (եթե առկա է նման սահմանափակում):
- 12.5** Բանկային հաշիվներով փոխարկումների համար օգտագործվում են անկանխիկ արժույթային արժեքներով առք ու վաճառքի համար հաստատված գործող փոխարժեքները:

ԳԼՈՒԽ 13. ՀԱՄԱԿԱՐԳ/ՀԱՎԵԼՎԱԾ

- 13.1** Համակարգը հարմարավետ գործիք է, որը հնարավորություն է տալիս առանց Բանկ այցելելու, արագ և արդյունավետ եղանակով օգտվել Ծառայություններից, այդ թվում՝ ներկայացնել և ստանալ (ակցեպտավորել) դիմումներ, հայտեր, առաջարկներ (օֆերտաներ), կնքել պայմանագրեր և այլ գործարքներ, ինչպես նաև իրականացնել Համակարգում Բանկի կողմից հասանելի դարձված այլ գործառնություններ:
- 13.2** Համակարգում Հաճախորդի կողմից կատարվող գործողությունները Բանկի կողմից դիտարկվում են որպես Հաճախորդի կամքի ուղղակի և իրական արտահայտում:
- 13.3** Համակարգից օգտվելու համապատասխան տեխնիկական և ծրագրային պահանջները ներկայացված են Պայմաններում, առկայության դեպքում նաև տվյալ Համակարգի հիմնական պայմաններում կամ կանոններում:
- 13.4** Հաճախորդը Համակարգից կարող է օգտվել, եթե ունի դրանից օգտվելու համապատասխան տեխնիկական և ծրագրային ապահովվածություն, Հավելվածի դեպքում (Mobile տիրույթ)՝ iOS կամ Android կամ Հավելվածի՝ այլ օպերացիոն համակարգերում հասանելիության դեպքում տվյալ օպերացիոն համակարգի առկայություն: Հաճախորդն ընդունում է, որ ունի բավարար գիտելիքներ և հմտություններ համակարգից օգտվելու համար:
- 13.5** Հաճախորդի սարքավորումը պետք է միացված լինի համացանցին (Մոբայլ-բանկինգ ծառայությունը չի մատուցվում ինտերնետ կապի բացակայության պայմաններում):
- 13.6** Մոբայլ-բանկինգ ծառայությունն ակտիվացվում է Հաճախորդի հետ կնքված համապատասխան դիմում-պայմանագրի կամ Հաճախորդի՝ Բանկի գլխամասային գրասենյակում կամ ցանկացած մասնաճյուղում գրված համապատասխան դիմումի հիման վրա:
- 13.7** Հաճախորդը ինքնուրույն ներբեռնում է բջջային ծրագիրը համապատասխան հրահանգների միջոցով, որից հետո մուտք է գործում ծրագրի տարբերանշանով հավելվածը:
- 13.8** Հավելվածում Հաճախորդը մուտքագրում է Բանկի կողմից տրամադրված «օգտանուն» և «գաղտնաբառ» տվյալները:
- 13.9** Բանկի կողմից տրված գաղտնաբառը օգտագործվում է միայն առաջին մուտքի ժամանակ, որից հետո Հաճախորդը պարտավոր է սահմանել նոր գաղտնաբառ:
- 13.10** Հաճախորդը Մոբայլ-բանկինգ ծրագրով համապատասխան գործարքները կատարում է և վճարման հանձնարարականներն ուղարկում է բջջային հավելվածի միջոցով համապատասխան հրահանգներ կատարելու միջոցով:
- 13.11** Կողմերն ընդունում են, որ

13.11.1 Հաճախորդը Համակարգից/Հավելվածից օգտվելու համար պետք է նույնականացվի՝ ապահովելով Համակարգով սահմանված որոշակի քայլերի հաջորդականությունը, մուտքագրի անհրաժեշտ տվյալները համաձայն ուղեցույցների և/կամ Համակարգով սահմանված քայլերի հաջորդականության, և հաշվառի Անձնական էջ, որը պետք է ունենա մուտքանուն և գաղտնաբառ:

13.11.2 Հաճախորդի օգտանվան/մուտքանվան և գաղտնաբառի լրացումը բավարար պայման է Հաճախորդի նույնականացման և Համակարգի միջոցով բանկային ծառայություններից օգտվելու համար: Կողմերը համաձայնում են նաև, որ Բանկն իրավասու է Համակարգում իրականացնել Հաճախորդին նույնականացնելու այլ գործողություններ, այդ թվում՝ Հաճախորդից պահանջել այլ տվյալներ, ծայնային հաստատումներ, ծածկագրեր և փաստաթղթեր, իսկ Հաճախորդը պարտավոր է ներկայացնել իրեն նույնականացնելու համար Բանկի կողմից պահանջված այլ տեղեկություններ, տվյալներ և փաստաթղթեր: Բանկն իրավունք ունի պահանջել թարգմանել օտար լեզուներով ներկայացված փաստաթղթերը՝ հայերեն, անհրաժեշտության դեպքում՝ նոտարական վավերացմամբ:

13.11.3 Հաճախորդի կողմից օգտագործվող գաղտնաբառով, PIN ծածկագրով, ինչպես նաև մատնահետքի, մեկանգամյա ծածկագրերի կամ դեմքը նույնականացնելու կամ այլ հեռախոսային/համակարգչային ֆունկցիաների մուտքագրման դեպքում Համակարգում Բանկ ներկայացվող բոլոր հայտերը, դիմումները, պայմանագրերն ու այլ էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են ստորագրված Հաճախորդի կողմից և ունեն թղթային բնօրինակ ստորագրությանը համարժեք իրավաբանական ուժ:

13.11.4 Համակարգից օգտվելու համար Հաճախորդը պետք է Բանկում ունենա առնվազն մեկ հաշվարկային և/կամ քարտային հաշիվ:

13.11.5 Հաճախորդը Համակարգում չի կարող կատարել պարտադիր համարվող տվյալների հեռացում կամ օրինակելի ձև հանդիսացող փաստաթղթերում փոփոխություններ, եթե դրանք չեն հանդիսանում փաստաթղթերի լրացման գործողություններ:

13.12 Հավելվածում գրանցվելիս.

13.12.1 Հաճախորդը պետք է անցնի քայլերի հաջորդականությամբ սահմանված նույնականացում, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում կատարելով բնօրինակ անձը հաստատող փաստաթղթի լուսանկարահանում, անցնելով կենսաչափական նույնականացում և իրականացնելով համակարգի պահանջով այլ անհրաժեշտ գործողություններ:

13.12.2 Հաճախորդի նույնականացման համար պարտադիր է Հաճախորդին պատկանող բջջային հեռախոսահամարի, էլեկտրոնային հասցեի լրացումը համապատասխան դաշտում: Ընդ որում՝ Բանկի գործող հաճախորդ հանդիսացող անձը բջջային հեռախոսահամարի կամ էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխման մասին պարտավոր է Բանկին գրավոր ներկայացնել տվյալների փոփոխման հայտ մինչև Հավելվածի ծառայություններից օգտվելը՝ համապատասխան փոփոխությունների իրականացման նպատակով:

13.12.3 Հավելվածում լրացված բջջային հեռախոսահամարով կամ էլեկտրոնային փոստի հասցեով օգտատիրոջ կրկնության դեպքում Հաճախորդից պահանջվում է լրացնել այլ՝ Հավելվածի օգտատերերի շտեմարանում չկրկնվող բջջային հեռախոսահամար կամ էլեկտրոնային փոստի հասցե, իսկ Բանկի գործող հաճախորդ հանդիսանալու պարագայում՝ Բանկին գրավոր ներկայացնել տվյալների փոփոխման համապատասխան հայտ:

13.12.4 Հաճախորդն էլեկտրոնային եղանակով ծանոթանում է Պայմաններին, Սակագներին, այդ թվում՝ Պայմաններով սահմանված ծառայությունների տեղեկատվական ամփոփագրերին՝ առկայության դեպքում, Հավելվածի միջոցով Հաճախորդին հասանելի ծառայություններից օգտվելու հնարավորություններին՝ նման նկարագրի առկայության դեպքում, ինչին էլեկտրոնային եղանակով համաձայնվելը և գործընթացին ընթացք տալը նշանակում է, որ Հաճախորդի և Բանկի միջև կնքվել է Հավելվածի ծառայությունների տրամադրման պայմանագիր:

13.12.5 Սույն գլխում նախատեսված պարտադիր համարվող տեղեկատվության՝ Հաճախորդի կողմից չտրամադրման, ոչ պատշաճ տրամադրման/այդ թվում՝ փոփոխությունների և/կամ

Բանկի կողմից այլ կասկածների առկայության դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել, սահմանափակել և/կամ կասեցնել Ծառայությունների տրամադրումը՝ Հաճախորդից պահանջելով նույնականացման համար այլ տեղեկատվության տրամադրում/գործողությունների իրականացում:

13.13 Համակարգի տրամադրման դադարեցումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև առկա այլ պայմանագրային հարաբերությունների փոփոխմանը կամ դադարեցմանը, եթե Կողմերի միջև գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:

13.14 Բանկը կարող է սեփական նախաձեռնությամբ.

13.14.1 Ժամանակավորապես ամբողջովին կամ մասամբ դադարեցնել Համակարգի միջոցով Ծառայությունների մատուցումը՝ Համակարգի անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացման նպատակով տեխնիկական սպասարկում իրականացնելու և անխափան աշխատանքի ապահովման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու հետևանքով:

13.14.2 կասեցնել կամ դադարեցնել Համակարգ, Հավելված մուտք գործելու Հաճախորդի հնարավորությունը՝ Պայմաններով, Դիմում-պայմանագրերով, Սակագներով և այլ փաստաթղթերով նախատեսված պարտավորությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև Հաճախորդի նույնականացման մասով կասկածներ ունենալու դեպքերում, ինչպես նաև այն դեպքում, երբ Բանկը հիմքեր ունի ենթադրելու, որ Համակարգն օգտագործվում է երրորդ անձի կողմից, խախտվել են անվտանգության պահանջները, առկա է զեղծարարության վտանգ կամ Համակարգի անվտանգության ապահովման նկատառումներով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

13.15 Համակարգի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները պահպանվում են Բանկում և կարող են կիրառվել և տրամադրվել որպես ապացույց:

13.16 Համակարգի միջոցով Հաճախորդի համար ոչ հասանելի ծառայություններից Հաճախորդը կարող է օգտվել Բանկ այցելելու միջոցով:

13.17 Բանկը ներկայումս ֆիզիկական անձանց առաջարկում է կատարել բանկային գործարքներ UNIMobile հավելվածի միջոցով:

13.18 UNIMobile հավելվածի և դրա միջոցով իրականացվող գործառնությունների մասին անհրաժեշտ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ բանկի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղումով՝ <https://www.unibank.am/hy/service/mobile-bank/>

13.19 Բանկը ներկայումս իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին առաջարկում է կատարել բանկային գործարքներ հետևյալ համակարգերով՝

- UNIBusiness Mobile հավելված,
- “Ինտերնետ Բանկ-Հաճախորդ” համակարգ:

13.20 UNIBusiness Mobile հավելվածի և դրա միջոցով իրականացվող գործառնությունների մասին անհրաժեշտ տեղեկատվությունը կարող եք ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղումով՝ <https://www.unibank.am/hy/service/unibusiness-mobile/>

13.21 “Ինտերնետ Բանկ-Հաճախորդ” համակարգի և դրա միջոցով իրականացվող գործառնությունների մասին անհրաժեշտ տեղեկատվությունը կարող եք ծանոթանալ բանկի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղումով՝ <https://www.unibank.am/hy/service/bank-client/>

Անվտանգության կանոններ

13.22 Համակարգից/Հավելվածից օգտվելու համար Բանկի կողմից Հաճախորդին կարող են տրամադրվել և կիրառվել գաղտնաբառեր, անվտանգության կոդեր, բանալիներ, անվտանգության սարքեր:

13.23 Հաճախորդը համաձայնվում և պարտավորվում է պահպանել Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ տեղեկությունների, Դիմում-պայմանագրերի գաղտնիությունը, չհրապարակել կամ երրորդ անձանց որևէ կերպ հայտնի/հասանելի չդարձնել իր՝ Համակարգ մուտք գործելու և Համակարգի շահագործման համար օգտագործվող գաղտնաբառերը, կոդերը և այլ տվյալները, թույլ չտալ Համակարգի ծրագրային ապահովման պաշտպանված մասի արտատպում, վերծանում, ձևափոխում և տարածում կամ կատարել գործողություններ, որոնք կարող են հանգեցնել այդպիսի տվյալները երրորդ անձանց հայտնի, հասանելի դառնալուն:

13.24 Հաճախորդը պարտավորվում է պահպանել Համակարգի ծրագրային ապահովման օգտագործման հետ կապված մտավոր սեփականության բոլոր իրավունքները, Համակարգն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:

13.25 Հաճախորդը տեղեկացված է, որ առաջարկվող Ծառայությունների ցանկն ու հնարավորությունները կարող են սահմանափակվել՝ կախված Հաճախորդի համակարգից կամ այլ տեխնիկական միջոցների հնարավորություններից, կապի որակից, Հաճախորդի գտնվելու վայրից, Բանկի կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման աշխատանքներից և այլ գործոններից: Բանկը կարող է ավելացնել կամ պակասեցնել մատուցվող գործառնությունների շրջանակը, դադարեցնել կամ կասեցնել Համակարգի մատչելիությունը (այդ թվում՝ լուծել Համակարգի տրամադրման պայմանագիրը)՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու կամ այլ պատճառներով:

13.26 Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի Անհատական տվյալների՝ երրորդ անձանց բացահայտվելու, հասանելի դառնալու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար: Հաճախորդը պարտավորվում է Բանկին զերծ պահել ցանկացած պահանջներից, որոնք առաջացել են Համակարգի շահագործման ընթացքում՝ երրորդ անձանց գործողությունների արդյունքում:

13.27 Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի սարքավորման կամ էլեկտրոնային հաղորդակցման ցանցի խափանման կամ ընդհատման, կամ երրորդ անձանց չարտոնված մուտքի արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար, ուստի Հաճախորդը պետք է ինքնուրույն իրականացնի իր լրկալ ցանցի (Բանկի հետ սահմանազատման կետից հետո գտնվող) աշխատունակության ապահովումը և ցանցային սարքավորումների պաշտպանությունը:

13.28 Իր իսկ անվտանգությունից ելնելով՝ Հաճախորդը հայտնում է իր պատրաստակամությունը Բանկին անհապաղ հայտնել համապատասխան լիազորություն չունեցող անձանց կողմից իր Համակարգից օգտվելու, Անձնական տիրույթ մուտք գործելու կամ նման փորձի մասին և/կամ իր Անձնական տիրույթի միջոցով համապատասխան լիազորություն չունեցող անձանց կողմից գործարք կատարելու կամ նման փորձի մասին:

13.29 Հաճախորդի անվտանգության նկատառումներից ելնելով Բանկն ապահովում է անվտանգության հուսալի միջոցների կիրառումը, սակայն Հաճախորդը տեղեկացված է, որ Համակարգն օգտագործում է իր ռիսկով և Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգի օգտագործման հետ կապված կապի խափանումների, տվյալների կորուստների, ինչպես նաև Համակարգի օգտագործումից բխող իր (Հաճախորդի) տվյալների և/կամ իր (Հաճախորդի) ցանկացած այլ կորուստների և վնասների համար:

13.30 Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի Անձնական տիրույթից ստացված տվյալների, հանձնարարականների կամ Անձնական տիրույթի միջոցով իրականացված այլ գործողությունների կամ անգործության համար, անգամ եթե ապացուցվի, որ այդ գործողությունները կատարվել են Հաճախորդի Անձնական տիրույթ մուտք գործելու և գործողություններ իրականացնելու իրավասություն չունեցող անձանց կողմից: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկատվության անճշտության, թերի ներկայացման և/կամ Պայմանների անվտանգության կանոնների չպահպանման հետևանքով Հաճախորդի վնասների համար:

ԳԼՈՒԽ 14. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

14.1 Բանկն երաշխավորում է, որ Բանկի կողմից մասատուցվող ծառայությունները որևէ կերպ ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն օժանդակում սահմանված միջազգային պատժամիջոցների և/կամ սահմանափակումների խախտմանը և/կամ շրջանցմանը:

14.2 Բանկը, հանդիսանալով պատասխանատու ֆինանսական կառույց, բարձր գնահատելով և պաշտպանելով իր հաճախորդների շահերը, անվտանգությունը և նրանց գործունեության անընդատությունը՝ հետևում է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, Եվրոպական Միության, Միացյալ Թագավորության, Միացյալ Նահանգների և այլ միջազգային պատժամիջոցներին և/կամ սահմանափակումներին:

14.3 Պատժամիջոցների պահպանման քաղաքականությունը արգելում է հաճախորդների ցանկացած գործունեություն, որը կխախտի կիրառելի պատժամիջոցները և/կամ սահմանափակումները: Նման գործողությունների արդյունքում կմերժվեն փոխանցումների/գործարքների իրականացումը, ինչպես նաև Բանկը կարող է հրաժարվել վերոնշյալ պատժամիջոցներով նախատեսված սահմանափակումները խախտող կամ շրջանցող հաճախորդներին սպասարկելուց:

14.4 Բանկն իրավասու է մերժել/չիրականացնել Հաճախորդի մուտքային և/կամ ելքային գործարքները, եթե Բանկին հայտնի են դարձել կամ առկա են կասկածներ, որ Հաճախորդի գործարքներն առնչվում են Բանկի ներքին քաղաքականությամբ անընդունելի և/կամ միջազգային պատժամիջոցներով արգելված գործունեության, ապրանքների, ծառայությունների և անձանց հետ:

14.5 Հաճախորդի և/կամ նրա հիմնադրի և/կամ տնօրենի՝ միջազգային պատժամիջոցների (ՄԱԿ, ԵՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի կամ այլ) ցանկերում ներառվելու դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ միակողմանի դադարեցնել գործարար հարաբերությունները կամ արգելափակել հաճախորդի հաշիվները և/կամ սառեցնել հաշիվն առկա միջոցները՝ կախված պատժամիջոց կիրառող երկրի պատժամիջոցային քաղաքականությունից:

14.6 Բանկն իրավունք ունի միակողմանի դադարեցնել Հաճախորդի հետ գործարար հարաբերությունները և լուծել պայմանագիրը նաև հետևյալ դեպքերում՝ նախապես 3 օր առաջ գրավոր տեղեկացնելով պայմանագրի լուծման և գործարար հարաբերությունների դադարեցման ժամկետների և պայմանների, հաշիվներում առկա միջոցների տնօրինման հնարավորությունների մասին.

- Հաճախորդը գործարքներ է իրականացնում միջազգային պատժամիջոցների ցանկում հայտնված գործընկերների հետ,
- Հաճախորդի գործարքներն առնչվում են Բանկի համար անընդունելի ոլորտների հետ,
- Հաճախորդի հիմնադիրը և/կամ տնօրենը և/կամ իրական շահառուն ներառվել են միջազգային պատժամիջոցների ցանկում:

14.7 Հաճախորդը երաշխավորում է, որ Բանկում բացված հաշիվները չեն օգտագործվում ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև միջազգային պատժամիջոցներով արգելված գործունեություն ծավալելու նպատակով և պարտավորվում է պահպանել միջազգային պատժամիջոցները, ուղղակի կամ անուղղակի չշրջանցել դրանք, իր գործողություններով չնպաստել դրանց շրջանցմանը:

14.8 Հաճախորդը պարտավոր է 10 օրվա ընթացքում Բանկին հայտնել հիմնադրի, տնօրենի, իրական շահառուի՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ցանկում հայտնվելու վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 15. ԲԱՆԿԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

15.1 Բանկի գործունեությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում հիմնված է Հայաստանի Հանրապետության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետու անձանց նկատմամբ նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի», այլ օրենքների ու իրավական ակտերի վրա, որոնց հիմնական նպատակներն են.

- Կանխարգելել Բանկը՝ որպես փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործիքի օգտագործումը,
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված հնարավոր ռիսկերի զսպումը,
- Բանկի գործարար համբավի և նրա հաճախորդների պաշտպանությունը:

15.2 Բանկի գործունեությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներառում է.

- «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի կիրառում (ներառյալ շահառուների և լիազորված անձանց նույնականացում),
- Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն,
- Հաճախորդների տվյալների թարմացում,
- Ռիսկի վրա հիմնված մոտեցման կիրառում,
- Կասկածելի գործարքների բացահայտում,
- Պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների/գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկին,
- Ուսուցումների կազմակերպում:

15.3 Բանկը չի բացում և չի սպասարկում կեղծ կամ մտացածին անուններով հաշիվներ:

15.4 Բանկը չի բացում միայն թվային, տառային կամ այլ պայմանական նշաններով արտահայտված հաշիվներ;

15.5 Բանկը մերժում է գործարար հարաբերությունների հաստատումը /գործարքի իրականացումը, եթե հաճախորդը չի տրամադրում Բանկի կողմից պահանջված փաստաթղթերը/տեղեկությունները:

ԳԼՈՒԽ 16. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

16.1 Կողմերն իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրության համապատասխան:

16.2 Բանկը պատասխանատու չէ Հաճախորդի կողմից Բանկին ցանկացած հարթակով, այդ թվում՝ հեռավար սպասարկման համակարգով, ներկայացված/ուղարկված փաստաթղթերում, ներառյալ՝ Հաճախորդի կորպորատիվ փաստաթղթերում, ներկայացված դիմումներում/օֆերտաներում, վճարման հանձնարարականներում, համաձայնություններում, լիազորագրերում նշված տեղեկությունների հավաստիության համար: Բանկն իր հետ իրավահարաբերություններում որպես որոշման կայացման և պայմանագրեր կնքելու իրավասու անձ հիմք է ընդունում Հաճախորդի կողմից ներկայացված անձանց որոշումները և չի կրում պարտականություն վերստուգելու որոշումների, իրավասու անձանց/մարմինների վերաբերյալ Հաճախորդի ներկայացված տեղեկատվությունը:

ԳԼՈՒԽ 17. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

17.1 Սույն Պայմաններով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար՝ թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանների ընդունումից (ակցեպտ) հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կանոններով սահմանված պարտավորությունների կատարումը:

ԳԼՈՒԽ 18. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

18.1 Սույն Պայմաններով նախատեսված գործառնությունների իրականացման նպատակով՝ թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը պարտավորվում են իրենց գործունեության ընթացքում խստորեն համապատասխանել բոլոր այն կիրառելի իրավական ակտերին, որոնք արգելում են հանրային կամ մասնավոր գործիչների շրջանում կոռուպցիան, փողերի լվացումը, ահաբեկչության ֆինանսավորումը:

18.2 Բանկը և Հաճախորդը հավաստում են, որ տեղյակ են այն մասին, որ ՀՀ օրենսդրությունը և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններն արգելում են փողերի լվացումը կամ դրան աջակցելը, ահաբեկչության հետ կապ ունեցող անհատների և կազմակերպությունների հետ գործարքները և ֆինանսական միջոցների ու աջակցության տրամադրումը:

18.3 Թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը պարտավորվում են ձեռնարկել և իրականացնել անհրաժեշտ և ողջամիտ քայլեր ու միջոցներ կոռուպցիան, փողերի լվացումը, ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելելու և կանխելու համար:

18.4 Բանկը և Հաճախորդը հայտարարում են, որ ըստ իրենց ունեցած տեղեկությունների՝ իրենց օրինական ներկայացուցիչները, գործակալները և ցանկացած այլ անձինք, ովքեր ներգրավված են սույն պայմանագրային հարաբերությունների իրականացմանը կամ որևէ ձևով ազդում են որոշումների կայացման վրա, ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն առաջարկում, չեն տալիս, չեն համաձայնում տալ դրամական միջոցներ կամ համանման արժեք, որպես հավելավճար կամ նվեր, որևէ անձի կամ ընկերության, այդ թվում, Կառավարության որևէ ներկայացուցչի կամ աշխատակցի, քաղաքական կուսակցության որևէ ներկայացուցչի, քաղաքական մանդատի որևէ թեկնածուի, ինչպես նաև՝ որևէ պետության, գործակալության կամ հասարակական կազմակերպության կամ որևէ միջազգային հասարակական կազմակերպության ներկայացուցչության անունից օրենսդրական, վարչական կամ դատական գործառույթներ կատարող ցանկացած անձի՝ նպատակ ունենալով նրանց կոռումպացնել և/կամ խրախուսել գործելու իրենց գործառույթներին և գործունեությանը անհամապատասխան, որպեսզի իրենց համար ձեռք բերեն կամ պահպանեն որևէ գործարք կամ առավելություն ստանան առևտրային գործունեության ընթացքում:

18.5 Թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը տեղեկացված են, որ իրենց գործունեությունը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին և հավաստում է, որ իրենց հարաբերությունների ընթացքում և դրա արդյունքում շրջակա միջավայրին ոչ թույլատրելի վնաս չի պատճառվի:

18.6 Սույն Պայմաններով նախատեսված գործառույթների իրականացման ընթացքում թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը պարտավոր են պահպանել բոլոր կիրառվող օրենքներն ու

կանոնները, որոնք արգելում են ռասսայական, կրոնական, մաշկի գույնի, ազգային, տարիքային, սեռական կամ հաշմանդամության վրա հիմնված խտրականությունը:

ԳԼՈՒԽ 19. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

19.1 Բանկը Պայմանները և Սակագները (այդ թվում՝ լրացումներն ու փոփոխությունները) հրապարակում է Հաճախորդների համար հասանելի վայրերում և միջոցներով, մասնավորապես՝ Բանկի պաշտոնական կայքում՝ <https://www.unibank.am/> և/կամ Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում առկա տեղեկատվական վահանակներում՝ տեղեկատվության տեղադրման միջոցով:**19.2** Սակագների փոփոխությունները, ինչպես նաև սույն Պայմանների փոփոխությունները համարվում են ուժի մեջ մտած Բանկի պաշտոնական կայքում հրապարակվելուց և Հաճախորդին ծանուցելուց՝ 7 (յոթ) Աշխատանքային օր հետո, սույն կետի 1) ենթակետում չնշված մնացած բոլոր դեպքերում՝ **19.3** Կողմերն ընդունում են, որ Սակագների և Պայմանների փոփոխությունները և լրացումները Հաճախորդի կողմից համարվում են ընդունված, եթե մինչև դրանց ուժի մեջ մտնելը Հաճախորդը Բանկին չի ներկայացրել Հաշվի սպասարկման կամ համապատասխան այլ պայմանագիրը/պայմանագրերը լուծելու վերաբերյալ դիմում:

ԳԼՈՒԽ 20. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20.1 Հաճախորդի՝ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջները, որոնք ներկայացվում են Բանկի դեմ և կապված են Բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ, կարող են ներկայացվել պաշտպանության ֆինանսական համակարգի հաշտարարին: Բանկը հրաժարվել է ֆինանսական համակարգի հաշտարարի՝ մինչև 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի սահմաններում կայացրած որոշումները դատական կարգով բողոքարկելու իրավունքից:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն ծանուցումը վերաբերվում է միայն ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին:

Ձեր բանկային հաշվին ներդրված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ՝ համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթների:

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ): Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վ.Սարգսյան 6, 375010, հեռախոսը՝ 58-35-14, պաշտոնական կայքը՝ www.adgf.am:

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են Օրենքի սահմանումներին:

Հատուցման դեպք

Ձեր երաշխավորված ավանդն ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում՝

- Եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
- Եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

Ուշադրություն: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների: Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով: Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային

ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով: Եթե Դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա:

Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն ՀՀ դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ ավանդը պակաս է 1000 ՀՀ դրամից:

Ձերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդն երաշխավորված չէ, եթե՝

- ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
- դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,
- ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով:
- զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին:

Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը:

Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում:

Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Ուշադրություն: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել Բանկին:

Յունիբանկ ԲԲԸ, 0025, ք.Երեւան, Չարենցի, 12, № 53, 1-5, (+374 10) 595555